

# ՄԱՐԶԻԿ

---


---

السنة الثانية والاربعون - العدد ٤٢٦ - Vol. XXXXII N° 426 - 42-ՄԱՐԶԻԿ ՀԱՅՈՒ 426

مارزيك

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومتنمن بيروت

marzig  
SPORTS MAGAZINE



# ՄԱՐԶԻԿ

ՀԱՅՈՒ

42րդ Տարր, Թեր 426, 192 Էջ

Հրատարակութեան յանառնամբ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022-ին:

## ՀԱՅ ՄԱՐՄՆԱՎԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱՎԱՐԵՐՁ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

2 Մթնոլորտի՝ միութիւնը

### ԳԻՐ ՕՐՅՆՈՒԹԵԱՆ

5 Գիր օրինութեան եւ գնահատանքի  
առ Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

6 Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան  
այցելութիւնը Արամ Ա. Վեհափառին եւ  
Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին

7 Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան  
պատուիրակութեան այցելութիւնը  
Յայաստանի մէջ Սուրիոյ դեսպանին

### ՄԱՐԶԱԽԱՂԵՐԵՆ ԱՌԱՋ

8 Մարզախաղերուն վիճակաձգութիւնը  
10 Յամա-Հ.Ս.Ը.Ս.ական 11-րդ մարզախաղերու  
ծանօթացման մամլոյ ասուլիսը  
11 Յանդիպում՝ մարզական պատասխանատուներու  
հետ

### ԲԱՑՈՒՄԸ

12 Յամա-Հ.Ս.Ը.Ս.ական 11-րդ մարզախաղերու  
բացման մեծաշուրջ հանդիսութիւնը  
26 Կառչած մնալ Հ.Ս.Ը.Ս.ի հիմնադիրներու  
սկզբունքներուն եւ ազգային արժեքներուն  
28 Հ.Ս.Ը.Ս. մէր հապարտութեան աղբիւրն է եւ  
ազգային անխորտակելի կամքի մարմնաւորումը  
29 Յաւարուած՝ փաստելու մէր աննկուն կամքը  
առաջ շարժուելու, իրար սատարելու, իրար  
յաղթանակներով տոգորուելու եւ նախկինից  
աւելի ուժեղ դուրս գալու

30 Պատմական իրադարձութիւն մը Հ.Ս.Ը.Ս.ի  
104-ամեայ երթին ընթացքին

### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ - ՈԳԵԿՈՉՈՒՄ

32 Սեփական կեանքը ազգասիրութեամբ եւ  
հայրենապատճեամբ արժեւորելու դասը  
40 Մինչեւ որ օրին մէկը իրարու համընկանին մէր  
պետութեան եւ հայրենիքին սահմանները  
44 Ցեղասպանութեան արհաւիրքը եւ անկանութեան  
սխրանքը մարզիկ-մարզիկուիհները կը վերապրին  
ծիծենակաբերդ եւ Սարդարապատ այցելութեամբ  
50 Ուշտենք մնալ կամաւոր բանակը  
մէր ազգին ու հայրենիքին  
52 Լիզապոնի հերոսական գործողութեան  
39-ամեակի նշում՝ յիշատակելի երեկոյով

### ՄԵԾԱԳՈՅՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ՝ «ՀՐԱՇ»Ը

56 Կատարեալ հոգատարութեան եւ  
անխորտական մօտեցումի լաւագոյն  
արտայայտութիւնը՝ «Հրաշ» մարզախաղերը

### ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

66 Արեւմտեան Մ. Նահանգներ Ֆութապոլի  
ախոյեան չորրորդ անգամ ըլլալով  
76 Արեւելեան Մ. Նահանգներու տղոց խումբը  
գահընկեց կ'ընէ համա-Հ.Ս.Ը.Ս.ական  
պասքեթապոլի վեց անգամ ախոյեան  
Արեւմտեան Մ. Նահանգներու խումբը  
86 Հ.Ս.Ը.Ս. Աւստրալիա առաջին անգամ ըլլալով  
կը տիրանայ պասքեթապոլի աղջկանց  
առաջնութեան տիտղոսին  
94 Պասքեթապոլի 3 x 3 մրցումներուն Լիբանանի  
տղոց ու աղջկանց գերազանց տիրապետութիւն

**Խմբագիր:** Վիկեն Ավագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորի Պողարեան, Սեւան Նազարեան, Յովեն Փանոսեան, Բաֆֆի Սիլվահեան, Սիլվի Օհաննեան, Շանի Ժամկոչեան եւ Սիլվա Ալավերդիեան:

**Վարչական կազմ:** Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղըրեան, Վարդուկ Ֆրոնզեան, Վարդան Քսաճիկեան, Տիրան Շահինեան եւ Ելիս Քիլէնեան:

**Էջադրում եւ ընդհանուր չեւաւորում:** Արջո Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազայիկի «Վահե Սէրեան» պատրաստ, Պէյրուք, Լիբանան:

**Բաժանմութագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 26 երկրներու բաժանմութեան: Տարեկան բաժանմութագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 40,000 լ.ո., Սիջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 65 ֆ., Մ. Նահանգներ եւ Ասպրալիա 75 ֆ.: Յրում՝ «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կարարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Խերթը կարելի է սկանավ նաև «Համազայիկ»ի ցրախանութեան: Լիբանանի դուրս թերթը կը սկանավ «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցե: «Սեւան» շենք, թիւ 77 փողոց, թիւ 4 հասուած, Պուրճ Համուտ, Պէյրուք, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org  Homenetmen - Հ.Ս.Ը.Ս. www.Homenetmen.org

- 102 Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի աղջիկները իրենց  
կը վերապահեն վոլիպոլի  
համա-Հ.Ս.Ը.Ս.ական առաջնութեան բաժակը
- 108 Ֆութբալի հարաւային Ամերիկայի տղոց  
խումբը անմրցելի ախոյեան
- 118 Հ.Ս.Ը.Ս. Արցախ փինկ-փոնկի տղոց  
ու աղջկանց ախոյեան
- 126 Թենիսի համա-Հ.Ս.Ը.Ս.ական նոր  
ախոյեանները Թեհրանէն եւ Լիբանանէն
- 134 Սուրիոյ շրջանէն Յակոր Մայք ճատրակի  
համա-Հ.Ս.Ը.Ս.Ս.ական ախոյեան
- 140 Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի աղջիկները ծովափի  
վոլիպոլի լաւագոյնները
- 146 Հ.Ս.Ը.Ս.ական կոլֆը ունեցաւ առաջին  
ախոյեանը՝ Տանիել Քէչեան
- 152 Լիբանան կը վերահաստատէ աթլեթիզմի  
մրցումներուն իր անվիճելի գերակայութիւնը
- 160 Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի եւ Լոնտոնի  
ներկայացուցիչները կը հնձեն լողի  
առաւելագոյն թիւով մետալները
- 166 Անհատական կարողութեան խաղերը  
կը ստեղծեն իրայատուկ խանդավառութիւն

#### **ՓԱԿՈՒՄԸ**

- 170 Մարզախաղերու փակման հանդիսաւոր  
արարողութիւնը
- 175 Մարզախաղերու լաւագոյնները
- 177 Համա-Հ.Ս.Ը.Ս.ական 11-րդ մարզախաղերու  
խմբային ընդհանուր արդիւնքներ
- 178 Մարզախաղերու ընդհանուր  
արդիւնքներու պատկեր
- 179 Մարզախաղերու ոգին եւ յիշատակները  
մասունքի նման տանիլ աշխարհի չորս կողմը

#### **ՄԱՐԶԱԽԱՂԵՐԵՆ ԵՏՔ**

- 180 Հրաժեշտը՝ յուշանուէրներու  
փոխանակումի հանդիպումով
- 182 Հայաստանի փողոցները լեցուցէ՛ք  
Հ.Ս.Ը.Ս.ական ծեր շունչով եւ ոգիով
- 184 Հ.Ս.Ը.Ս.ի յաղթանակին «Լուսաւոր կենաց»»ը
- 186 Տօնահանդէս

#### **ԱՆԴՐԱՌԱՋ**

- 187 Ներկաները
- 188 Նշումներ - Նկարներ



## ՄԹՇՆՈԼՈՒԹԻՒՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(ՀԱՍՏ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՎԴԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ)

**Մ**թնոլորտ բառին կրնան յարմարիլ բազմաթիւ ածականներ.- ջերմ, ընտանեկան, դրական, դաստիարակիչ, խանդավառ, ճնշու, հաճելի...

Սակայն յիշեալ ածականներէն ոչ մէկը կրնայ հարազատորէն ներկայացնել համա-Հ.Մ.Ը.Մ.Ական ձեռնարկի մը մքնոլորտը. Իսկ ինչ խօսք, երբ այդ ձեռնարկը տեղի կ'ունենայ երեք տարուան անքնական պայմաններէ ետք՝ քորոնայի համաճարակ, միութենական գործունեութեան սահմանափակում, ճամբորդութեան արգելուներ, համաշխարհային տնտեսական տագնապ, Արցախի պատերազմ եւ անոր յաջորդած մտահոգիչ դէպէրու զարգացումներ:

Նման պայմաններու մէջ, համա-Հ.Մ.Ը.Մ.Ական մարզախանքեր կազմակերպելը, բազմահարիւր մարզիկ-մարզիկուիհներ հայրենի հողին վրայ համախմբելն ու միութենական կեանքը վերականգնելը պիտի ենթադրէր հրակայական ճիզ եւ ներդրում. Ու ճաեւ՝ մարդկային եւ նիւթական լայն միջոցներ, տասներկու մարզաձեւերու մըրցակցութեան կողմին, առաջին անգամ ըլլալով իրազործելու համար յատուկ խնամքի կարօտ պատահներու «Հրաշք» մարզախանքերը:

Անկարելին կարելի դարձնելու մարտահրաւերն էր, որ կը դրուէր Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներուն դիմաց, տեսակատր փորձութիւններէ ետք չյուսահատելու եւ անխախտ հաւատքով դարձեալ երիտասարդութեան հետ ըլլալու, անոնց հետ եւ անոնցմով խանդավառունու, անոնց ընդմէջէն հայութեան աւելի լաւ ապագայի մը հեռանկարը տեսնելու համար:

Պէտք էր թօքափել հիասքափութեան, ընկրկումի եւ նահանջի բոլոր տրամադրութիւնները եւ վերադառնալ քնականոն կեանքի ընթացքին՝ ինքնակազմակերպումին, միութենական նպատակներու հետապնդումին, միտք ու մկան, հոգի ու կամք, սիրու ու խիլճ զարգացնելու արուեստին:

Պէտք էր յադրահարել մեր շուրջը տիրող պարտուղական ոգիի բոլոր արտայայտութիւնները, երիտասարդութեան առիթ ընծայելով վայելելու յադրանակներու բերկրանքը, սեփական ուժի հանդէա ինքնավստահութիւնը՝ լաւագոյնին եւ հզօրագոյնին հասնելու կարելիութիւնը:



Եւ դեռ, պէտք էր անգամ մը եւս շեշտել Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական դերն ու առարելութիւնը՝ միութեան աշխարհասփիւր մասնաճիւղերու մարզական շարքերը շարժումի մէջ դնելու եւ գիտակից մօտեցումով զանոնք մարմնակրթական նորանոր նուաճումներու մղելու համար:

Իսկ կարեւորագոյնը, պէտք էր վերագտնել անցնող երեք տարիներու մեծագոյն բացական՝ ՄԹՇՆՈԼՈՐՏԸ. Եղբայրական գործակցութեան, անկեղծութեան, հարազատութեան այն ջերմ մքնոլորտը, որ ուս-ուսի, թեւ-թեւի, հազարաւորներ կը բարձրացնէ, երբ Հ.Մ.Ը.Մ.ը յադրանակ մը արձանագրէ, եւ նոյնքան մը հաւատաւորներ կը բարձրացնէ, երբ Հ.Մ.Ը.Մ.ը... պարտութիւն մը ճաշակէ, որովհետեւ ո՛չ յադրանակները կը շացնեն եւ ո՛չ ալ պարտութիւնները կ'ընկնեն այս միութիւնը: Հ.Մ.Ը.Մ. պայմանաւորուած չէ բաժակներու եւ ախոյեանութիւններու տիրացումով:

Հաւաքական խանդավառութեան ախոյեանին համար խաղն ու վազքը, փորձն ու մրցումը միջոցներ են անցեալին ճակատագիրի բերումով որբացած, զայրական դարձած, իսկ այսօր՝ Սիֆիորի օտար հորիզոններուն տակ հասակ առած պատահները այլասերիչ բարքերէ եւ խարարիչ մոլութիւններէ հետու պահելու համար, կիրք մարմինի մէջ բաղաքակիրք մարդը կերտելու, անհատին մէջ մտքի եւ հոգիի ներդաշնակ գուգորդութիւն ստեղծելու եւ բարոյական ու մարդկային ըմբռնումներու մէջ ազգային գաղափարականութեան սկզբունքները արմատացնելու համար:

Այլ բան չէ եղած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն եւ յաջորդական դեկապար մարմիններուն նպատակը միութեան ստեղծումէն ի վեր, երէ ոչ Հ.Մ.Ը.Մ.ի իրայատուկ մքնոլորտին մէջ, մարմինի եւ մկաններու մշակման հետ ազգային նկարագիր մշակել, ինքնութիւն եւ պատկանելիութիւն կերտել, գերագոյն արժեքներու գիտակցութիւն փոխանցել, որպէսզի Ազգն ու Հայրենիքը, Եկեղեցին ու Ընտանիքը սերունդներու համար ըլլան նուիրական սըրբութիւններ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախանքերը, ինչպէս համա-Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր հանդիպումները, տակաւին, կոչւած են ունենալու յաւելեալ պարտականութիւն մը. աշ-



Խարիի չորս ծագերէն եկող եւ քաղաքակրթական այլազան ազդեցութիւններու ենթակայ մարզիկ-մարզիկուիիններուն մէջ հաւաքական մտածողութիւն սերմանել եւ այդ մտածողութիւնը երկիրէ երկիր կամուրջ դարձնել՝ հայ երիտասարդութեան ընդհանրական դիմագիծ տալու եւ անով ազգը վերանորոգելու համար:

Վհա՛, չորս տարին անգամ մը այս ճշմարտութիւնները կը պարզուին բոլորին: Նորերը փորձով կը վկայեն, իսկ իինները գոհունակութեամբ կը հաստատեն, թէ ինչայս, հակառակ ժամանակի եւ միջազգային բոլոր դժուարութիւններուն, Հ.Մ.Ը.Մ. կը մնայ հաւատարիմ իր էութեան

եւ կոչումին, կը մնայ գերազանցապէս ՄԹՆՈԼՈՐՏԻ միութիւն, եւ իբրև յօյսի աւազան, իր կենարար մքնուլորտին մէջ հայեցի դրոշմով կը մկրտէ իրեն դիմող հազարաւոր պատանիններն ու երիտասարդները, կեանքին վերադարձնելու համար ֆիզիքապէս տոկուն, հոգեպէս առողջ, գաղափարապաշտ եւ յանձնառու տղաք ու աղջիկներ, պատրաստ՝ ընծայուելու այն ժողովուրդին, որուն ծառայելու կոչումով ճամբայ ելաւ այս միութիւնը 104 տարի առաջ եւ որուն ծառայութեամբ իր ճամբան կը շարունակէ Ան, մեր կեանքի ներկային եւ պատմութեան մէջ:

## Հ.Մ.Ը.Մ. 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՍԱՍՆԱԾԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՅՈՐՆԵՐ

**Հայասպան:** «Գ. Յակոբեան» (Երեսան), «Յ. Հինդեան» (Երեսան), «Վ. Զարարեան» (Երեսան), Արովիան (Արովիան), «Հ. Առուարամեան» (Զարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Ը. Քրիսեան» (Երեսան), «Վ. Չերազ» (Երեսան), «Վ. Բախչեան» (Արմավիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռուզունեան» (Էջմիածին), Սարգունի (Սարգունի), «Ա. Չոհրասպեան» (Վետիի), «Տ. Խոյեան» (Երեսան), «Դ. Վարդան» (Երեսան). **Արցահի:** Սրբիանակերդ. **Վրասպան:** Արալքալաք, Արալցիաս, Թիֆլիս. **Ռուսիա:** Սոսկուս. **Լիքանան:** Պէյլուք, Զահլէ, Թրիփոնի, Պ. Համուլդ, Ամանար, Ֆիման, Անթիլիաս, Ժվրէյրէ, Պառչրիէ, Ռատուրա. **Սուրբիա:** Հալէայ, Դամասկոս, Լաքարիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղտապ. **Քուէյր:** Քուէյր. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունասպան:** Աքէնք, Գոքինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարտէ. **Հռուսական:** Ալմելօ, Ալբանիա, Առնիեն. **Գերմանիա:** Ախմիխ. **Շոտլանդիա:** Շոտլանդիա. **Շոտլանդիա:** Սուրինմ, Վեսթերու, Սուրենրելիա. **Պուլկարիա:** Սովիա, Ռուսէ, Փլովդիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս. **Գանապան:** Սոնգրէալ, Համիլիուն, Թորոննօ, Քէմպրիհ, Աէնք Գարինգ, Լաւան, Վանքուլը. **Արեւմբեան Մ. Նահանգներ:** Լու Ամմելլս, Սան Ֆրանսիսո, «Սասուն» (Ֆրեզնօ), Սոնգրէպիլլո, «Ազադարտ» (Փասապինա), «Արարատ» (Վլենգէյլ), Օրէնճ Քառնէրի, «Մասիս» (Սան Ֆեռնանդո), «Անան» (Սան Ֆիէլօ), «Արագ» (Ինլինդ Էմիփայր), «Անի» (Սանք Գլարս), «Շանը» (Քրեսէնթա Հովիլի), «Միփան» (Պըրպէնը), «Արցահի» (Լաս Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլմար Քրիք) «Զաւախը» (Նորք Հովիլուս), «Լոռի» (Սաքրամենո), «Կիլիկիա» (Սանք Քլարիթա), **Արեւմբեան Մ. Նահանգներ:** Ուաշինգտոն, Պուրլը, Նիւ Եռոք, Նիւ Ծըրզի, Շիքակօ, Ֆիլադելֆիա, Ֆլորիդա, Ալբանի, Շարլոթ, Սերիմար Հովիլի. **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիդնի), «Արար» (Սելապուոն), «Կամք» (Սիդնի), «Նաւասարդ» (Սիդնի), «Արարատ» (Սիդնի).



## ԱՐԱՄ Ա.

ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ  
ԿԱՍՏՈՔՆ ԱՍՏՈՒԹՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄՔ  
ԱԶԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՇՆՈՐՀՔ, ՄԵՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԵ ԵՒ ՈՂՋՈՅՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԵՆՉ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՄՐԲՈՅ  
ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԿՈՐՉԻՆ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ  
ԱՌ.

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ  
11-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՎՈՐՈՒՆ ԱՌԹԻՒ  
ԵՐԵՒԱՆ, 22 ՅՈՒԼԻՍ 2022

*Մեծի Տաճան Կիլիկիոյ Կարողիկոսութեան Ամրիլիասի Մայրավանքին հայրապետական օրինութեամբ ու հայրական սիրով կ'ողջունենար համառ. Հ.Մ.Ը.ական 11-րդ մարզախաղերը: Մեծապէս ողջունելի երեւոյք է, որ աւելի քան վեց հարիւր մարզիկներ ու մարզիկուհիներ Հայաստանէն ու Սփիտոքէն կը մասնակցին այս մարզախաղերուն:*

Արդարեւ, Հ.Մ.Ը.Ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ գլեղի ունեցող ներկայ մարզախաղերը իրենց մարզական բնոյրէն անդին, յաղկանշական դէպքեր են հեղողիկութ կազմակերպուող ու ժաւալող Հ.Մ.Ը.Ի գործունէութիւնը արդացողացնող, ինչպէս նաև Հայաստան-Սփիտոք գործակցութեան կապերը ամրացնող:

Հարկ է նշել, թէ Հ.Մ.Ը.ը կարեւոր դեր կարարած է մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ, մարմնամարզական բնագաւառին առընթեր, նաև հայ կեանքի այլ մարզերէն ներս, դառնալով նոր սերունդներու հոգեմուայր ու ազգային աճանան նպաստող դպրոց, բարին ամրողական առունուզ: Մեր ազգին հոգեւոր, մշակութային, ազգային ու համահայկական արժեքները ու իրէալները միշտ եղած են մղիչ ուժերը Հ.Մ.Ը.ի կեանքին ու գործունէութեան: Վաղահ ենք, որ նոյն ոգինով ու գելականուով Հ.Մ.Ը.ը պիտի շարունակէ իր առաքելութիւնը մեր ժողովուրդի համայնական կեանքին ներս: Մեր սպասումն է, որ ներկայ մարզախաղերուն մասնակցող իրաքանչիր մարզիկ ու մարզիկուհի դառնայ դրօշակիրը ու միանգամայն դեսպանը Հ.Մ.Ը.ի կեանքին խորը, եւ գործունէութեան նպաստակ պուող համահայկական արժեքներուն ու իրէալներուն:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Ասպուած, որ Իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ Հ.Մ.Ը.ը եւ զօրացնէ անոր առաքելութեան լծուած մեր ազգի զաւակները:

Հայրական ջերմ սիրով:

Աղօթարար՝  
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ





## Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵՊՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓՈՒԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

**Հ**աբաթ, 10 Սեպտեմբեր 2022-ի կէսօրէ առաջ ժամը 11-ին, Հ.Մ.Լ.Մ.Ի Կեղրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ՝ ատենապետ եղբ. Վահէ Նաճարեանի, անդամներ՝ Վիգէն Աւագեանի, Թաղին Օրտողեանի եւ Հրաչ Սիսեռեանի, այցելեց Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք եւ հանդիպում մը ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Հանդիպումը առիթ մը եղաւ, որպէսզի Հ.Մ.Լ.Մ.Ի Կեղրոնական Վարչութիւնը Արամ Վեհահառը շնորհաւորէ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նախագահ ընտրութեան համար եւ շնորհակալութիւն յայտնէ համա-Հ.Մ.-Լ.Մ.ական մարզախաղերուն իր յղած օրհնութեան գիրին համար: Կեղրոնական Վարչութիւնը Վեհափառ Հայրապետին ներկայացուց նաեւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերուն յաջողութիւնը եւ յառաջիկայ ամիսներուն իր իրադրութելիք համա-Հ.Մ.Լ.Մ.ական նախաձեռնութիւնները:

Կեղրոնական Վարչութիւնը Վեհափառ Հայրապետը իրագել դարձուց Փարիզի արուարձաններէն իսի Լէ Մուլինոյի մէջ Հ.Մ.Լ.Մ.Ի համա-Եւրոպական Կեղրոնի կառուցման աշխատանքներուն մասին: Կեղրոնին նախագծման աշխատանքները արդէն իսկ աւարտած են եւ շուտով, տեղույն քաղաքապետութեան հետ գործակցութեան համաձայնագիրի ստորագրութեամբ, ընթացք կ'առնեն շինարարական աշխատանքները:

Իր կարգին, Արամ Ա. Վեհափառ Կեղրոնական Վարչութեան ճամբով իր օրհնութիւնն ու գնահատանքը փոխանցեց Հ.Մ.Լ.Մ.Ի մէծ ընտանիքին՝ յիշեցնելով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իր թեմական կառուցներով, միշտ զօրավիր կանգնած է Հ.Մ.Լ.Մ.Ի ազգանուէր գործունէթեան:

Հանդիպումին աւարտին, Հ.Մ.Լ.Մ.Ի Կեղրոնական Վարչութիւնը Վեհափառ Հայրապետին յանձնեց համա-Հ.Մ.-Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերուն յուշանուէրը:

ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հ.Մ.Լ.Մ.Ի Կեղրոնական Վարչութիւնը, համա-Հ.Մ.-Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու աւարտին, Կիրակի, 31 Յուլիս 2022-ին, այցելեց էջմիածին՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին: Պատուիրակութեան մաս կազմեցին ատենապետ եղբ. Վահէ Նաճարեան, անդամներ՝ Վիգէն Աւագեան, Թաղին Օրտողեան, Հրաչ Սիսեռեան, Տիրան Վահագին եւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ քոյր Սատրա Վարդանեան: Գարեգին Բ. Կաթողիկոսի կողքին, հանդիպումին ներկայ գտնուեցաւ նախան Արք. Ցովհաննիսեան:

Հ.Մ.Լ.Մ.Ի պատուիրակութիւնը Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին ներկայացուց համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերուն ընթացքը եւ «Հրաշք» մարզախաղերուն յաջող ձեւով կազմակերպումը: Պատուիրակութիւնը նաեւ ներկայացուց Հ.Մ.Լ.Մ.Ի աշխարհասկիւու գործունէթիւնը եւ յառաջիկայի ծրագիրները:

Գարեգին Բ. Կաթողիկոս իր գնահատանքը յայտնեց Հ.Մ.-Լ.Մ.Ի Կեղրոնական Վարչութեան՝ Հայաստանի մէջ նման նախաձեռնութեան մը իրականացման համար: Ան նաեւ գոհունակութեամբ արտայայտուեցաւ «Հրաշք» մարզախաղերու մասին, որոնք համախմբեցին յատուկ խնամքի կարու 185 պատանիներ եւ երիտասարդներ:

Գարեգին Բ. Կաթողիկոս շեշտեց կարեւորութիւնը համա-





Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերուն, որոնք լաւագոյն կարելի-ութիւնը կը ստեղծեն, որպէսզի նորահաս սերունդի ներկայացուցիչները իրարու ճանչնան, խանդավառուին, լաւատեսութեամբ տոգորուին եւ հայրենասիրութեան ոգիով լեցւին:

Հանդիպումին աւարտին, Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսին յանձնեց համաշ. Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերուն յուշանուէրը:

## Հ.Մ.Լ.Մ.ի ԿԵԴՐՈՒԾԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՔԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԶ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ

**Հ**ինգշաբթի, 27 օուլիս 2022-ի կէսօրին, Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նահարեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիդէն Աւագեանի, Տիրան Վահրատեանէ եւ քոյր Թամին Օրսողիեանի, այցելեց Հայաստանի մէջ Սուրբիոյ դեսպանատուն եւ հանդիպում մը ունեցաւ գեսպան Նորա Արիսեանի եւ գեսպանատան անձնակազմի անդամներուն հետ:

Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը շնորհաւորեց գեսպան Նորա Արիսեանին նշանակումը եւ յաջողութիւն մաղթեց դիւանագիտական իր առաքելութեան: Կեդրոնական Վարչութիւնը նաեւ ներկայացուց համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերուն կարեւորութիւնը՝ աշխարհասիրու Հ.Մ.Լ.Մ.ականները համախմբելու եւ Հայաստան-Սփիւռք կապերը ամրապնդելու համար:

Իր կարգին, գեսպան Նորա Արիսեան մեծապէս գնահատեց «առողջ մարմնի



մէջ առողջ միտք» կերտող Հ.Մ.-Լ.Մ.ի գերակատարութիւնը անցնող աւելի քան 100 տարիներու ընթացքին: Ան ըստ, որ Հ.Մ.Լ.Մ.հարուսա փորձառութիւն եւ վաստակ ունի տիպար քաղաքացիներու պատրաստութեան մէջ, որովհետեւ միշտ եւ ամէն տեղ անյանձնառու կը մնայ իր նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի գործադրութեան:

Արիսեան հաստատեց, որ Սուրբիոյ պատերազմին ամբողջ տեսութիւնները բաշխեց, բանակին եւ պետութեան կողքին կանգնեցաւ եւ մինչեւ իսկ նահատակներ տուաւ Սուրբիոյ գերիշխանութեան եւ հողային ամբողջականութեան պահպանման համար:

Այս առիթով Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու յուշանուէրով պատուեց գեսպան Նորա Արիսեանիը:

Հանդիպումին երկրորդ մասով, Կեդրոնական Վարչութեան պատուիրակութեան միացան Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբիոյ պատվիրակութեան ներկայացուցիչները, որոնք գեսպան Նորա Արիսեանին եւ գեսպանատան անձնակազմին ծանօթացուցին Սուրբիոյ պատուիրակութեան կազմը եւ յաջողութիւնները:

Այսուհետեւ, Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնական Վարչութեան պատվիրակութեան ներկայութեամբ, գեսպան Նորա Արիսեան գեսպանատան գլխաւոր սրացին մէջ ընդունեց Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբիոյ պատուիրակութեան բոլոր անդամները: Տեղի ունեցաւ խօսքերու փոխանակում եւ յուշանուէրու յանձնում





## ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ

ամա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու մեկնարկէն ամիս մը առաջ, Շաբաթ, 18 Յունիսի երեկոյեան ժամը 5-ին (Պէյրութիւ ժամով), առցանց հանդիպումով մը տեղի ունեցած մարզախաղերու մրցումներուն վիճակածգութիւնը, ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներու, մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի ներկայացուցիչներու եւ մարզախաղերու մասնակից շրջաններու մարզական պատասխանատուններու:

Հանդիպումին սկիզբը ներկայացուեցան մարզախաղերու պատրաստութեան աշխատանքները, կազմակերպական հետապնդելի կէտերը եւ մինչեւ մարզախաղերու մեկնարկ՝ 20 Յունիս ըշաններու պարտաւորութիւնները:

Ապա, վիճակածգութեամբ կատարուեցաւ հաւաքական մարզախաղերու մասնակից խումբերուն վիճակածգութիւնը՝ ծցելու համար իւրաքանչւր խումբի մրցումներուն պատկերը՝ ըստ իր խմբակին եւ մրցակից խումբերուն: Յետ-վիճակածգութեան պատկերը ներկայացաւ հետեւեալ ձեռով-



### ՊԱՄՓԵԹՊՈԼ ԵՐՔՅ ՏՂԱՔ

#### Ա. ԽՄԲԱԿ

- Արեւմտեան Մ.Ն. (1)
- Լիբանան
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.
- Արեւելեան Մ.Ն. (2)

#### Բ. ԽՄԲԱԿ

- Արեւելեան Մ.Ն. (1)
- Աւստրալիա
- Սուրիա
- Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.

### ՊԱՄՓԵԹՊՈԼ ԵՐՔՅ ԱՂՋԻԿՆԵՐ

- Աւստրալիա (1)
- Աւստրալիա (2)
- Արեւմտեան Մ.Ն. (1)
- Լիբանան
- Սուրիա

### ՖՈՒԹՊՈԼ

#### Ա. ԽՄԲԱԿ

- Արեւմտեան Մ.Ն. (1)
- Աւստրալիա
- Թիֆլիս
- Հարաւային Ամերիկա

#### Բ. ԽՄԲԱԿ

- Երուսաղէմիչ
- Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս
- Սուրիա
- Լոնտոն

### ՎՈԼԻՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ

- Հարաւային Ամերիկա
- Արցախ
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (1)
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (2)



### ՖՈՒԹՍԱԼ ՏՂԱՔ

#### Ա. ԽՄԲԱԿ

- Լիբանան
- Սթոքոլմ
- Սուրիա
- Երուսաղէմիչ

#### Բ. ԽՄԲԱԿ

- Հարաւային Ամերիկա
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.
- Գանատա
- Աւստրալիա
- Մալաչյ

### ՖՈՒԹՍԱԼ ԱՂՋԻԿՆԵՐ

- Աւստրալիա
- Հարաւային Ամերիկա
- Գանատա
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.

### ՊԱՄՓԵԹՊՈԼ 3x3 ՏՂԱՔ

#### Ա. ԽՄԲԱԿ

- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (1)
- Լիբանան
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (2)
- Լոնտոն

#### Բ. ԽՄԲԱԿ

- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (3)
- Գանատա
- Սուրիա
- Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս

### ՊԱՄՓԵԹՊՈԼ 3x3 ԱՂՋԻԿՆԵՐ

- Լիբանան (1)
- Լիբանան (2)
- Սուրիա
- Աւստրալիա

### ԾՈՎԱՓԻ ՎՈԼԻՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ

- Գանատա
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (1)
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (2)
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (3)



## ՀԱՄԱ-Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՐՈՒ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՄԸ

9

որեքչաբթի, 20 Յուլիս 2022-ի կէսօրէ առաջ ժամը 11-ին, Երեւանի «Մարիոթ» պանդոկի «Տրդատ Բ.» սրահին մէջ տեղի ունեցաւ համա-Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ 11-րդ մարզական երու ծանօթացման մամլոյ ասուլիմը:

Ասուլիսին ներկայ գտնուեցան հայրենի լրատուամիջոցներու ներկայացուցիչներ, մարզական երու մասնակից պատուիրակութիւններու պատասխանատուններ եւ Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ Կեդրոնական Վարչութեան անդամներ, գլխաւորութեամբ՝ ատենապետ եղբ. Վաշէ Նաճարեանի:

Մամլոյ ասուլիսին խօսքերով հանդէս եկան Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ Կեդրոնական Վարչութեան անդամ եւ մարզական յանձնախումբի ներկայացուցիչներ. Տիրան Վահրատեան (Աւստրալիա), մարզական երու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսիկան (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ Վահրատեան ատենապետ Քոյր Սանտրա Վարդանեան (Հայաստան):

Եղբ. Տիրան Վահրատեան այս առիթով ամփոփ գիծերով ներկայացուց Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ 104-ամեայ պատմութիւնը, կառոյցը եւ նպատակը, նշերով թէ Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ նպատակը եղած է ու կը մնայ սկաուտութեան եւ մարզական գործունէութեան ձամբով միտքով ու մարմինով առողջ, հայեցի դիմագիծով, հայրենասէր եւ ազգասէր հայեր պատրաստել:

Քոյր Սանտրա Վարդանեան ծանօթացուց Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ Հայաստանի կառոյցը, որ արդէն ունի 33 տարուան պատմութիւն եւ կը գործէ Երեւանի մէջ 7 եւ Երեւանէն դուրս 5 աշխոյժ մասնաճիւղերով:

Ապա, մարզական երու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսիկան խօսեցաւ համա-Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ 11-րդ մարզական երու մասնակից պատուիրակութիւններուն եւ կիրարկուած մարզական երու մասին: Ան ըսաւ, որ մարզական երու կը մասնակցին Հ.Մ.ԸՆ.ԱԿԱՆ 19 շրջաններէն, առաւել՝ թէկրանի «Արարատ» միութենէն 645 մարզիկներ: Իբրեւ նորութիւն, առաջին անդամ ըլլալով, մարզական երու կը մասնակցին նաեւ յատուկ խնամքի կարօւ 184 պատանիներ եւ երիտասարդներ, 12-22 տարեկան: Երկու օրուան վրայ երկարելիք անոնց մարզական երը կը կոչւին «Հրաշք» մարզական եր:

Մամլոյ ասուլիսին արտասանուած խօսքերէն ետք, մասնակիցները պատասխանեցին ներկայ թղթակիցներու հարցումներուն:



## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՆԵՐՈՒ ՀԵՏ

**Համա-Հ.Մ.Լ.Մ.ական** 11-րդ մարզախաղերու մեկնարկէն օր մը առաջ, Չորեքշաբթի, 20 Յուլիսի երեկոյեան ժամը 8-ին, երեւանի «Մարիոթ» պանդոկի «Տղատ երկրորդ» սրահին մէջ տեղի ունեցաւ մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններու պատասխանատուներուն առաջին հանդիպումը՝ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն եւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամներուն հետ:

Հանդիպումին բացումը կատարեց եւ ներկաները ողջունեց Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Ան շեշտեց, որ համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերը սովորական մրցաշարքեր չեն, ուր խումբ մը կը յաղթէ, իսկ այլ խումբ մը կը պարտուի, համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերը առիթներ են միութենական մթնոլորտի ստեղծման եւ Հ.Մ.Լ.Մ.ական ընտանիքի անդամներու իրարու ծանօթացման: Մարզախաղերը, - նշեց եղբ. Նաճարեան, - կը նպատակադրեն նաեւ նոր սերունդին ծանօթացնել հայրենիքը իր պատմական ու ազգային արժէքներով:



Հանդիպումին խօսքեր արտասահնեցին համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսիլեան, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան, Հ.Մ.-Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եւ մարզական յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Արմանտ Քիլիճեան: Հանդէս եկան նաեւ մարզական յանձնախումբի անդամներ եւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչականներ, որոնք հանդիպումի մասնակիցներուն ներկայացուցին մարզախաղերու յայտագիրներուն, խաղերուն, փոխադրամիջոցներուն, քարոզչական, վարչական եւ գումակային աշխատանքներուն կապուած շարք մը տեղեկութիւններ: Փոխանցուեցան նաեւ կարգ մը մարզախաղերու նոր օրէնքները եւ անոնց կիրարկման անհըրաժեշտութիւնը:

Աւարտին, մարզախաղերու պատասխանատուները պատասխանեցին պատուիրակութիւններու ներկայացուցիչներու գանազան հարցումներուն եւ ժամադրուեցան երկրորդ հանդիպում մը ունենալ Հինգչաբթի, 21 Յուլիսի երեկոյեան ժամը 8-ին, խաղերու մեկնարկէն անմիջապէս ետք:





# ՀԱՍՎ-Հ.Մ.Հ.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՂԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՄԵԾԱՇՈԽՔ ՀԱԴԻՍՈՒԹԻՒՆԸ





**- ԶԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆ  
ԾԻԾԵՌԱՎԱՐԵՐԴԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԵՆ,  
- 850 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՎ ՃՔԵՂ  
ՏՈՂԱՆՑՔ ԵՐԵՒԱՆԻ ՄԷԶ,  
- ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ՝  
«ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ**



այութեան «կամաւոր բանակ»ը՝ Հ.Մ.Ը.Մ.ը Ուրբար, 22 Յուլիս 2022-ին, Երևանի մէջ արժանավայել շուրով կատարեց իր 11-րդ մարզա-խաղերուն բացումը, անգամ մը եւս փասդր գույնով, որ ինչքան ալ դժուար ու ծանր պայմաններ դիմագրաւեն մեր ժողովուրդն ու հայրենիքը, Հ.Մ.Ը.Մ. կը մնայ այն երիբասարդ ու կենտունակ միութիւնը, որ գիտէ յոյս, խանուակառութիւն եւ աւելի լաւ ապագայ ներշնչել բոլորին: 104-ամեայ այս միութիւնը չի ծերանար, յոզնուրիւն չի ճանչնար եւ կը շարունակէ իր հիմնադիրներու ուղին՝ հաւափարին մնալով դեւաբար բարձրանալու եւ զինք ծնող ժողովուրդն ալ իր հետ բարձրացնելու աւելի քան մէկ դարեայ իր աշանաբանին:



## ՄԱՐԶԱԿԱՂԵՐՈՒ ՋԱՀԻՆ ԲՈՅՑՎԱՌՈՒՄԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՅՈՒԺԱՀԱՍԱԼԻՐԻՆ

Հայ մարդը Ուրբաթ, 22 Յուլիսին արդար հպատակամբ եւ գոհունակութեամբ հետեւեցաւ համա-Հ.Մ.-Հ.Մ.-ական 11-րդ մարզախաղերու բացման հանդիսութեան, որ ընթացք առաւ երեկոյեան ժամը 6-ին, Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ մարզախաղերդի յոցահամալիրին մէջ մարզախաղերդու ջահին բոցավառումով։ Ապա, փոխանցավագրով, եօթը Հ.Մ.-Հ.Մ.-ականներ՝ Նարպէյ Բժշկեան (Արեւմտեան Մ.Ն.), Ճոն Շըտեէկ (Ֆրանսա), Ալէքս Պէտիկեան (Գանատա), Լէա Պուտագեան (Լիբանան), Նոյեմի Յարութիւնեան

(Հարաւային Ամերիկա), Գարուն Պողոսեան (Աւստրալիա) եւ Միրելլա Չափարեան (Սուրբիա) փոխն ի փոխ վագրով ջահը Ծիծեռնակաբերդէն հասցուցին «Ազատութեան» հրապարակ, ուր երեկոյեան ժամը 7.30-ին տեղի ունեցաւ բացման պաշտօնական հանդիսութիւնը։

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՀՐԱՊԱՐԱԿ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՔԵՐԹԸ

Նախքան հանդիսութիւնը, մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններու 645 մարզիկ-մարզիկութիւնները Մաշտոցի անուան Մատենադարանի առջեւէն շքերթով մը ուղղուեցան բացման հանդիսավայր՝ «Ազատութեան»

հրապարակ։ Շքերթը առաջնորդեց Հ.Մ.-Հ.Մ.-Հ.Ա.Ս.ի սկաուտական շեփորախումբը։ Հրապարակին մօտակայ պողոտային մէջ, շքերթի մասնակիցներուն միացան «Հրաշք» մարզախաղերու մասնակից, յատուկ ինամթիվ կարօտ 184 պատանի-երիտասարդներ, ընկերակցութեամբ իրենց օժանդակող աւելի քան 50 կամաւորներու։

## ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՆԵՐԸ

Բացման հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ պատուեցին Հայաստանի մօտ հաւատարմագրուած Արժաններնի, իրաքի եւ Սուրբիոյ դեսպանները, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատրեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամներ Սիմոն Սիմոնեան եւ Բագրատ Եսայեան, ՀՕՄ-ի եւ Համագույնի Կեդրոնական Վարչութիւններու եւ Հայաստանի կառույցներու ներկայացուցիչներ, Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի անդամ Վլքժ Շառոյեան, մարզական ֆետերասիոններու պատասխանատուններ, Հ.Մ.-Հ.Մ.-ի ներկայ եւ նախկին Կեդրոնական Վարչութիւններու անդամներ, Հ.Մ.-Հ.Մ.-ի բարերարներ, բարեկամներ, «Փիւնիկ» միութեան նախագահ Յակոբ Աբրահամեան եւ Արցախեան պատերազմներու Հ.Մ.-Հ.Մ.-ական նահատակներու հարազատներ։







### **ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒՄԸԸ**

Հանդիսութիւնը ընթացք առաւ մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններու հրապարակ մուտքով։ Երկիրներու դրօշներով յաջորդաբար հրապարակ մուտք գործեցին եւ իրենց յատուկ տեղերը գրաւեցին հետեւեալ շրջաններու պատուիրակութիւնները։ Արեւելեան Մ. Նահանգներ, Արեւմբեան Մ. Նահանգներ, Ամման, Աւստրա-

լիա, Գանատա, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ., Հարաւային Ամերիկա, Լիբանան, Սուլիա, Երուսաղէմ-Հայֆա-Եափա, Փարիզ, Լոնտոն, Քուէյթ, Մարսէյ, Սթոքհոլմ, Թիֆլիս, Արցախ, Միւնիխ, Պաղտաստ եւ Թեհրանի «Արարատ» կազմակերպութիւն։

Պատուիրակութիւններու ժամանումէն ետք հնչեցին Հայաստանի եւ Հ.Մ.Լ.Մ.ի քայլերգները։

### **ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ**

**ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ**

Հանդիսութեան սկիզբը, Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան ատենադը-պիր եղբ. Վիդէն Աւագեան ընթերցեց համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախա-ղերուն առիթով Մեծի Տաճն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան յղած «Օրհնութեան գիր»ը, որուն մէջ Վեհափառը նկատել կու տար, որ «Հ.Մ.Լ.Մ.ի Կեղրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցող ներկայ մարզախաղերը իրենց մարզական բնոյթէն անդին, յատկանշական դէպեքը են՝ հետպահական կազմակերպուող ու ծաւալող Հ.Մ.Լ.Մ.ի գործունէութիւնը արտացոլացնող, ինչպէս նաեւ Հայաստան-ը Միւնիք գործակցութեան կապերը ամրացնող»։

Արամ Ա. Վեհափառ իր «Օրհնութեան գիր»ով կը գնահատէր Հ.Մ.Լ.Մ.ի աւելի քան մէկ դարու առաքելութիւնը եւ կը շեշտէր, որ «Հ.Մ.Լ.Մ.ը կարեւոր գեր կատարած է մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ, մարմ-





նամարզական բնագաւառին առընթեր, նաեւ հայ կեանքի այլ մարզերէն ներս, դառնալով նոր սերունդներու հոգեմտաւոր ու ազգային աճման նպաստող դպրոց, բառին ամբողջական առումով։ Մեր ազգին հոգեւոր, մշակութային, ազգային ու համայնական արժէքները ու խտէալները միշտ եղած են մղիչ ուժերը Հ.Մ.Լ.Մ.ի կեանքին ու գործունէութեան։ Վստահ ենք, որ նոյն ոգիով ու տեսլականով Հ.Մ.Լ.Մ.ը պիտի շարունակէ իր առաքելութիւնը մեր ժողովուրդի համայնական կեանքէն ներս։ Մեր սպասումն է, որ ներկայ մարզախաղերուն մասնակցող իւրաքանչիւր մարզիկ ու մարզիկուհի գառնայ դրօշակիրը ու միանդամայն դեսպանը Հ.Մ.Լ.Մ.ի կեանքին խորք, եւ գործունէութեան նպատակ տուող համահայկական արժէքներուն ու խտէալներուն» («Օրինութեան գիր»ը տեսնել էջ 5):



**ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԻԶ  
ՅԱՆՉՆԱԽՈՒԿՄԲԻՆ ԽՕՍՔԸ**  
Այնուհետեւ խօսք առաւ համա-Հ.Մ.-  
Հ.Մ.Ա.Կ.ի վարչութեան եւ համա-Հ.Մ.-  
Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի իր գործակից քոյլերուն եւ եղբայրներուն, որոնց հետեւողական աշխատանքին եւ նույիրումին շնորհիւ կարելի դարձաւ այս մեծ իրադարձութեան իրականացումը։

Կ'արձանագրէ իր 104-ամեայ երթին ընթացքին։

«Վերջին երկու տարիներուն քորոնայի համաճարակը հարուածեց ամբողջ աշխարհը, ըստ եղբ. Մարսիլեան, - Հ.Մ.Լ.Մ. եւս ազգուեցաւ այս համաճարակէն եւ տարիներու աւանդութիւն դարձած քառամեայ համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերը յետաձեց, սակայն միշտ եւ անպայման իրականացնելու վճռակամութեամբ»։

Եղբ. Մարսիլեան շնորհա-

կալութիւն խօսք ուղղեց Հ.Մ.Լ.Մ.-Հ.Մ.Ա.Կ.ի վարչութեան եւ համա-Հ.Մ.-Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի իր գործակից քոյլերուն եւ եղբայրներուն, որոնց հետեւողական աշխատանքին եւ նույիրումին շնորհիւ կարելի դարձաւ այս մեծ իրադարձութեան իրականացումը։

Եղբայրը իր խօսքին աւարտին մաղթեց, որ մասնակիցները կ'առաջնոր-





Դըխն «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով եւ եղբայրական ոգիով, պատմական լիշտակներով աւարտելու համար համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերը (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 30):

**Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ  
Հանդիսութեան յաջորդ Խօսքը ար-**

տասանեց համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու հիւրընկալ շրջանի՝ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան:

Քոյր Վարդանեան յայտնեց, որ «Այսօր բոլորս այստեղ ենք՝ մեր մեծ ընտանիքի ներկայացուցիչներով հաւաքուած՝ փաստելու մեր աննկուն կամքը՝ առաջ շարժելու, իրարու սատարելու, իրարու յաղթանակներով տոգորուելու եւ նախ-

կինէն աւելի ուժեղ դուրս գալու պայքարի այն ամէնին հետ՝ ինչ որ կը յայտնուի մեր յառաջնորդացի, զարգացման, տարածման, գաղափարների ու տեսլականի իրականացման ճանապարհին»:

Ապա, խօսքը մասնակից Հ.Մ.Լ.Մ.ականներուն ուղղելով, քոյրը աւելցուց՝ «Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի որպէս մեծ ընտանիքի անդամ, իր վրայ վերցնելով հիւրընկալ շրջանի պատասխանառուութիւնը, արդէն ամիսներ շարունակ լծուել է աշխատանքի, որպէսզի դուք այս օրերի ընթացքում, լինելով հայրենի հողի վրայ, ամբողջութեամբ զգաք այդ բերկրանքը եւ վայելէք ձեր Հայրենիքում գտնուելու իւրաքանչյսուր պահը։ Լիայոյա եմ, որ դա մեզ կը յաջողուի եւ դուք կը վերադառնաք ձեր շրջանները, ձեզի հետ տանելով նոր լիցքեր, նոր եռանդ եւ նոր աւիւն՝ իրականացնելու այն մեծ առաքելութիւնը, որի համար աշխատում է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը արդէն 104 տարի։ Սա է մեր յաղթանակը, եւ անկախ այս օրերին տարեկ մարզական մըրցումների արդիւնքներից՝ մենք բոլորս





յաղթանակով ենք աւարտելու այս մարզախաղերը» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 29):

### Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՑԻ

#### ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԽՈՍՔԸ

Այս առիթով, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատրեան: Անըսաւ, որ «Հ.Մ.Լ.Մ.Ը իրաւացիօրէն հայ ժողովուրդի նուիրեալ, երիտասարդ եւ ամենամեծ կամաւոր բանակն է, որ նահատակ ցեղի անմահներու մնացորդացէն կերտեց նպատակասլաց, պինդ ու հայրենանուէր տորմիդ՝ ամէնուրեք ծառայելու համար հայ ազգին, եւ ոչ միայն մարզական եւ սկառատական ոլորտներէն ներս: Մէկ խօսքով՝ հայ արիներու այս բանակը ո՛չ միայն ինքնակատարելագործման, մարմնով, մըտքով բարձրանալու առաքելութեան է նուիրուած, այլ՝ յատուկ ջանքի է լըծած մեր երիտասարդութիւնը մղելու նոր նշաճողեր յաղթահարելու՝ մարդկային ազնուութեան, գաղափարապաշտութեան եւ հայկական մաքուր դի-

մագծի կերտման մարզերէն ներս: Այս հնոցէն կոփուող երիտասարդը կը պատրաստուի դիմագրաւելու համամարդկային ու համահայկական մարտահրաւէրները միաժամանակ»:

Շարունակելով, Յակոբ Տէր Խաչատրութեան հաստատեց, որ «Մեծ ժառանգութեան տէր Հ.Մ.Լ.Մ.Ը այսօր ալ մեր հպարտութեան աղբիւրն է եւ ազգային անխորտակելի կամքի մարմնաւորումը:

Վստահ ենք, որ ան շարունակաբար պիտի համախմբէ սերունդներ, գոտեպնդէ ազգային գաղափարախօսութեամբ, մղէ հայապահպանման, հայակերտման եւ հայ դատի պայքարի մարդկային ու հայկական ամէնէն ազնիւ, պարկեցտ, նուիրեալ ու նպատակասլաց խտէալներով»:

Աւարտին, Յակոբ Տէր Խաչատրուց եան վարձքը կատար ըսաւ Հ.Մ.Լ.Մ.Ը





**Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան եւ ներկայ բոլոր քոյրերուն ու եղայրներուն, որոնք հայրենի երկնակամարին տակ համախումբ կը կատարեն իրենց առաքելութիւնը։ Ան լիակատար յաջողութիւն մաղթեց Հ.Մ.Լ.Մ.-ի մեծ ընտանիքին (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 28)։**

### **ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ**

Բացման հանդիսութեան պաշտօնական բաժինին եզրափակումը կատարւեցաւ Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի պատգամով։

Եղբ. Նաճարեան խօսքին սկիզբը որ «Թիւով 11-րդ համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական այս մարզախաղերը Հ.Մ.-Լ.Մ.-ի եւ համասփիւթեան իրադերու պատմութեան մէջ ունին իրայատուկ տեղ, որովհետեւ անոնք կը կազմակերպուին հակառակ քորոնայի համաձարակին ստեղծած համաշխարհային դժուարութիւններուն եւ տնտեսական սուր տագնապին, ինչ որ ժիւտական

իրենց մեծ ազդեցութիւնը ձգած են ինչպէս մեր կեանքի բոլոր մարզերուն՝ նաև մարզական ու միութենական կեանքին վրայ։ Մարզախաղերը իրայատուկ են նաեւ, որովհետեւ միութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, աւանդական շրջաններու կողքին, այս խաղերուն կը մասնակցին նաեւ Հ.Մ.Լ.Մ.-ի թիֆլիսի մասնաճիւղը եւ նորակազմ Արցախի մասնաճիւղը»։

Եղբ. Նաճարեան յայտնեց, թէ մարզախաղերը կը կազմակերպուին «Հայ Մարզիկի Օր»։ Միութեան ուհավիրայ հիմնադիր Շաւարչ Քրիստոնի ծննդեան օրը՝ 22 Յուլիսը Հ.Մ.Լ.Մ.-ի կողմէ հռչակւած է «Հայ Մարզիկի Օր», նշելու համար մարզական փառաւոր սերունդներու անցեալի յաղթանակները եւ պատւելու համար ներկայի հայ մարզիկները ընդհանրապէս եւ Հ.Մ.Լ.Մ.-ական մարզիկները յատկապէս։

Եղբ. Նաճարեան խօսեցաւ Հ.Մ.-Լ.Մ.-ի իրայատկութեան մասին եւ շեշտեց, որ «Հ.Մ.Լ.Մ.-ական մարզիկը ուրիշներէն կը զատորոշուի իր ազգային ազնիւթիւններին հայ պատուակէ հայ պատանին դաստիարակել ազգային արժէքներով՝ զօ-

ու հայ ժողովուրդին հանդէպ ունեցած մեծ նույնութեան վեցամ մը եւս հաստատուեցաւ, երբ Արցախի պաշտպանութեան կոչին ընդառաջելով, Հ.Մ.Լ.Մ.-ականներ սրացան մինչեւ գերագոյն զոհաբերութիւն։ Անոնք ոչինչ խնայեցին Արցախի սրբազն հողին ու դատին պաշտպանութեան համար, որովհետեւ այդ պաշտպանութիւնը իր տարբեր երեսներով կը ծառայէր մէկ ու միակ նպատակի՝ տէր կանդնելու հայութեան բոնաբարեալ իրաւունքներուն, մեր հայրենիքի հողային ամբողջականութեան եւ մեր ժողովուրդի հաւաքական անվտանգութեան»։

Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը անդրադարձաւ միութեան դիմագրաւած մարտահրաւելներուն եւ հաստատեց, որ հաւատքի, ծառայութեան եւ զոհողութեան սկզբունքներուն վրայ հիմնուած այս միութիւնը այլ ընտարանք չունի՝ եթէ ոչ կառչած մնալ իր հիմնադիրներու սկզբունքներուն եւ ազգային արժէքներուն, որպէսպէս շարունակէ հայ պատանին դաստիարակել ազգային արժէքներով՝ զօ-



րավիր կանգնելով հայկական պետականութեան՝ ընդդէմ հայրենիքին ըսպառնացող բոլոր վասնգներուն:

Իր պատգամին աւարտին, եղբայրը ըսաւ. «Յարգա՞նք մեր ժողովուրդին անունը բարձր պահող հայ մարզիկներուն: Յարգա՞նք եւ պատիւ Հայաստանի անկախութեան եւ Արցախի ազատագրութեան ճամբուն ինկած մեր բոլոր նահատակներուն» (Խօսքին անբողջութիւնը տեսնել էջ 26):

### **ԶԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՐԴՈՒՄԸ**

Խօսքերէն ետք հասաւ բացման հանդիսութեան այնքան սպասուած պահը՝ ջահավառութիւնը: Հրապարակ մուտք գործեց ազատամարտիկ, մարզիկ, անկուտրում կամքի խորհրդանիշ՝ Սարգիս Ստեփանեան, որ Արցախի մէջ իր երկու ոտքն ու աջ ձեռքը կորսնցուցած ըլլալով, կը հանդիսանայ պայքարի, համբերութեան եւ տոկունութեան լաւագոյն օրինակ: Հակառակ ֆիզիքական իր բարդ վիճակին ան երկու անգամ խլած է բազկամարտի եւրոպայի ախոյեանու-



թեան տիտղոսը, իսկ երեք անգամ նուաճած է աշխարհի ախոյեանութեան առաջնութիւնը: Սարգիս Ստեփանեանի մասին ցուցադրուեցաւ կարծ տեսանիւթ մը, որմէ ետք՝ ներկաներու յոտընկայ ծագերուն եւ բուռն քաջալերանքին հետ Ստեփանեան բոցավառեց մար-

գախաղերուն գլխաւոր ջահը (Ստեփանի մասին տեսնել առանձին):

Հուսկ, աեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.-ական մարզիկի եւ իրաւարարի երգումը: Երգումը կատարեցին մարզիկ Արշակ Մարգարեան եւ իրաւարար Դաւիթ Պոյածեան:

Հանդիսութեան պաշտօնական բաժնին աւարտին, երեկոյեան ժամը 8.30-էն ետք, կիրարկուեցաւ գեղարուեստական հարուստ յայտագիր՝ հայկական ժողովրդային, ազգագրական եւ ազգային-հայրենասիրական երգերով:

## ՍԱՐՁԱԽԱՂ ԵՐՈՒ ԶԱՀԱՎԱՌ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ

**Փ**ոխ գնդապետ, «Արիութեան համար» մելու բողակացած երու բազկամարդի Երազակի իւրապայի եւ աշխարհի ախոյեան Սարգիս Ստեփանեան ծնած է 21 Փետրուար 1983-ին: Մայրն ու կինը Արցախին են, հայրը՝ Արուելինենէն:

Սարգիս Ստեփանեանի անունը գեղ գրած է Հայաստանի մրցանիշներու եւ մրցանակիրներու «Գիցազնագիրը»ին մէջ:

2001-2003 ան զինուորական պարբադիր ծառայութիւնը կազմարած է Արցախի պաշտպանութեան բանակին մէջ: 2007-ին նշանակուած է Հայաստանի զինեալ ուժերու յակուլ նշանակութեան խումբի հրամանադր: Սարգած է տեղակալի, աւագ գեղակալի եւ բափիրանի կոչումներ: 2014-ին դարձած է յակուլ նշանակութեան զօրամասի յակուլ նշանակութեան վաշրի հրամանադր:

29 Յունիս 2014-ին, մարտական գործողութեան մը ընթացքին, վիրաւոր ընկերու մը օգնութեան հասնելու ժամանակ, հեղափոխյա Սարգիս Ստեփանեան ծանրօրէն վիրաւորուած է ականի մը պայրումն: Կորսանցած է երկու ուղերքն ու աջ չեռքը:

Յունիս 2015-ին, Սարգիս Ստեփանեանին շնորհուած է հազարապետի կոչում:

Փայլուն զինուորական մը ըլլալու կողքին, Սարգիս Ստեփանեան եղած է պոկուն մարզիկ: 1998-2006 ան կիրարկած է ծանրամարդ, իսկ վիրաւորուելէն եղք՝ բազկամարդ: Մասնակցած է միջազգա-

յին ախոյեանութիւններու երկու անգամ նուաճած է Եպոպայի առաջնութիւնը (2018, 2019), իսկ երեք անգամ՝ աշխարհի ախոյեանութիւնը (2017, 2018, 2019):

31 Մայիս 2018-էն ի վեր ան հիմնադիր-նախագահն է «Հայաստանի Հանրապետութեան հաշմանդային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպութեան:

Անկողիում կամքի, յուսահապութիւն չճանշցող մարդու եւ ամրնկնելի հայու գիշարը հանդիսացող Սարգիս Ստեփանեան արժանացած է զնահարական բազմաթի մելքաններու («Մարզական Բաղրամեան», «Արարական ծառայութեան», «Արիութեան», «Հայաստանի նախագահի...»): Անուանացած է 2003 րուսկանին եւ բախտաւորուած է երկու զաւակով՝ Վարդան (2004) եւ Սերգէ (2006):

Սարգիս Ստեփանեանի հերոսական կեանքը ու մարզական գործունեութիւնը կը պատրմէ վաւերագրական «Ովքի կանգնիքը» ֆիլմը, որ Youtube-ի մէջ հրապարակումէն մինչեւ օրս, նուազ քան մէկ գարուան ընթացքին, արժանացած է շուրջ 15 հազար դիմումի: Անոր նուիրած են նաև բազմարի այլ ֆիլմներ՝ «Կամքի ուժ. Սարգիս Ստեփանեան», «Նոյիրեալները. Սարգիս Ստեփանեան», «Նոր հայեացը» «Ես սիրու եմ կեանըրը» Սարգիս Ստեփանեան», «Armenian wounded heroes fund: The Sargis Stepanyan story» եւ այլն:







## ԿԱՌԱԾ ՄՆԱԼ Հ.Մ.Բ.Մ.Ի ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒՄ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐՈՒՄ

(Հ.Մ.Բ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ  
ԵՂԲ. ՎԱՐԵ ՆԱԽԱՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ  
11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՎԴԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ,  
ԵՐԵՒԱՆԻ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿ)

**Գ**եղեցիկ աւանդութեամբ մը, հաւաքուած ենք  
մեծ հպարտանքով համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-  
րդ մարզախավերուն պաշտօնական բացման  
հանդիսութիւնը կատարելու մեր յաւերժա-  
կան մայրաքաղաք Երեւանի մէջ, որ այս պա-  
հուն կը հիւրընկալէ 20 երկիրներէ եւ Հ.Մ.Լ.Մ.ական 22 շր-  
ջաններէ ժամանած, ինչպէս նաև Թեհրանի Հայ Մշակութա-  
յին «Արարատ» Կազմակերպութենէն 850 մարզիկ-մարզիկու-

հիներ, մարզիչներ, իրաւարարներ եւ Հ.Մ.Լ.Մ.ական պա-  
տասխանատուներ: Առաւել, այստեղ ներկայ են հարիւրաւոր  
Հ.Մ.Լ.Մ.ական ծնողներ եւ հաւատաւոր համակիրներ, որոնք  
ներկայ են բաժնեկից գառնալու մարզական այս տօնին ուրա-  
խութեան եւ Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին հետ ցնծութեան  
պահեր ապրելու հայրենիքի մէջ:

Թիւով 11-րդ համա-Հ.Մ.Լ.Մ.ական այս մարզախավերը  
Հ.Մ.Լ.Մ.ի եւ համասփելութեան խաղերու պատմութեան մէջ  
ունին իւրայատուկ տեղ, որովհետեւ անոնք կը կազմակեր-  
պլուին հակառակ քորոնայի համաճարակին ստեղծած համաշ-  
խարհային դժուարութիւններուն եւ տնտեսական սուր տագ-  
նապին, ինչ որ իրենց ժխտական մեծ ազդեցութիւնը ձգած են  
ինչպէս մեր կեանքի բոլոր մարզերուն, նաև մարզական ու  
միութենական կեանքին վրայ:

Իւրայատուկ են այս մարզախավերը, որովհետեւ միու-  
թեան պատմութեան մէջ առաջին անդամ ըլլալով, աւանդա-  
կան շրջաններու կողքին, այս խաղերուն կը մասնակցին նաև  
Հ.Մ.Լ.Մ.ի Թիֆլիսի եւ Արցախի նորակազմ մասնաճիւղերը:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախավերը 41 տարուան իրենց  
պատմութեան մէջ, առաջին անդամ ըլլալով, յայտագիրի  
վրայ ունին 12 մարզախավեր, 3-ը բոլորովին նոր խաղեր:  
Համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզական այս մեծ իրադարձու-





թեան գլխաւոր նորութիւնը «Հրաշք» մարզախաղերն են՝ յատուկ խնամքի կարօտ մասուկներու եւ երիտասարդներու համար կազմակերպուող մրցումները:

**Հ.Մ.Լ.Մ.** հաւատարիմ իր կոչումին՝ ծառայելու մեր ժողովուրդի բոլոր պատանիներուն անխտիր, այս մարզախաղերուն աշխատանք տարաւ 650 մարզիկներու կողքին ապահովելու նաեւ մասնակցութիւնը յատուկ խնամքի կարօտ, 12-22 տարեկան 184 պատանիներու եւ երիտասարդներու՝ Հայաստանի զանազան շրջաններէն եւ Սփիտոքէն:

Այս մարզախաղերը յատուկ են նաեւ այն պատճառով, որ անոնց բացումը կը կատարուի «Հայ Մարզիկի Օր»ը: Արդարեւ, միտութեան ուհավիրայ հիմնադիր Շաւարչ Քրիսեանի ծննդեան օրը՝ 22 Յուլիսը Հ.Մ.Լ.Մ.ի կողմէ հոչակուած է «Հայ Մարզիկի Օր», նշելու համար մարզական փառաւոր սերունդներու անցեալի յաղթանակները եւ պատուելու համար ներկայի հայ մարզիկները ընդհանրապէս եւ Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկները յատկապէս: Մարզիկներ, որոնք իրենց առաւելագոյնը տուած են բարձր պահելու համար Հ.Մ.Լ.Մ.ի եւ Հայաստանի անունը եւ միշտ նպաստած են մեր ժողովուրդի վերելքին:

Այսօրուան բացման այս հանդիսութիւնը առիթ է նաեւ յիշեցնելու, թէ Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկը ոչ միայն կը դաւանի «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» սկզբունքը, այլև՝ անուրիշներէն կը զատորոշուի իր ազգային ազնիւ նկարագիրով եւ Հայաստանին ու հայ ժողովուրդին հանդէպ ունեցած միշտիրումով:

Այս իրականութիւնը անդամ մը եւս հաստատուեցաւ, երբ Արցախի պաշտպանութեան կոչին ընդառաջելով, Հ.Մ.Լ.Մ.ականներ սլացան մինչեւ գերագոյն զոհաբերութիւն: Անոնք ոչինչ խնայեցին Արցախի սրբազան հողին ու դատին պաշտպանութեան համար, որովհետեւ այդ պաշտպանութիւնը իր տարբեր երեսներով կը ծառայէր մէկ ու միակ նպատակ՝ տէր կանգնելու հայութեան բոնաբարեալ իրաւունքնե-

թեան, մեր հայրենիքի հողային ամբողջականութեան եւ մեր ժողովուրդի հաւաքական անվտանգութեան:

**Ցարգելինե՞ր,**

Զեր զիմաց կանգնած Հ.Մ.Լ.Մ.ի մարզական բանակը յառաջիկայ 10 օրերուն ազնիւ մրցակցութեան եւ արդար խաղի լաւագոյն օրինակները պիտի տայ մարզասէր մեր հանրութեան: Մեր տղաքն ու աղջիկները անհատական թէ խմբային իրենց յաղթութիւններով պիտի բարձրանան եւ իրենց հետ հայութիւնն է որ պիտի բարձրացնեն ամուր, պայծառ եւ շէնչող Հայաստանի մը տեսիլքով:

Յաղթեն կամ պարտուին, անոնք անպայման պիտի շահին հայրենի հողին վրայ ըլլալու, հայրենիքով ապրելու եւ հայրենիքով գորանալու մեծ ուժը,

**Որպէսզի Հայաստանը հպարտանայ իրենց յաղթութիւններով:**

**Որպէսզի Հայաստանը գորանայ իրենց իրագործումներով:**

**Ու որպէսզի ըլլայ բոլորին Հայաստանը, ամուր, հզօր եւ յաղթական:**

**Ցարգելինե՞ր,**

110 մասնաճիւղերէ եւ 28 հազար անդամներէ բաղկացած միութիւն է Հ.Մ.Լ.Մ.ը: Ան ունի նման մարզախաղեր կազմակերպելու 100 տարուան կենսափորձ: Պոլսոյ ողիմպիհականներէն մինչեւ Միջին Արեւելքի երեմնի միջմասնաճիւղային խաղեր, հասնելու համար 1981-ին ընթացք առած այս մարզախաղերը, Հ.Մ.Լ.Մ.ին ապահոված են հայ մարզական կեանքին յառաջատար միութիւնը ըլլալու իրաւունքը:

Հաւատքի, ծառայութեան եւ զոհողութեան սկզբունքներուն վրայ հիմնուած այս միութիւնը այլ ընտրանք չունի՝ եթէ ոչ կառչած մնալ իր հիմնադիրներու սկզբունքներուն եւ աղգային արժէքներուն, որպէսզի շարունակէ հայ պատանին դաստիարակել ազգային արժէքներով՝ գորավիդ կանգնելով հայ պետականութեան, ընդդէմ հայրենիքին սպառնացող բոլոր վտանգներուն:

**Ցարգա՞նք մեր ժողովուրդին անունը բարձր պահող հայ մարզիկներուն:**

**Ցարգա՞նք եւ պատիւ Հայաստանի անկախութեան եւ Արցախի ազատագրութեան ճամբուն ինկած մեր բոլոր նահատակներուն:**

**Կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ.ը ծնող հայ ժողովուրդը:**

**Կեցցէ՛ հերոսական Արցախը:**

**Կեցցէ՛ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանը:**



## Հ.Մ.Ը.Մ. ՄԵՐ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՄՆ Է ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԽՈՐՏԱԿԵԼԻ ԿԱՄՔԻ ՄԱՐՄՆՈՐՈՒՄԸ (Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՎԱՏՈՒՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱՆԱՎՐԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ «ԱԶԳԱՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿ)

**Հ.Մ.Ը.Մ.Ը.Ը.** ամառ-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու յարգելի պատասխանատուներ, պատուարժան հիւրեր եւ սիրելի հարազատներ,

**Հ.Մ.Ը.Մ.Ը.Ը.**, իրաւացիօրէն, հայ ժողովուրդի նուրիբեալ, երիտասարդ եւ ամենամեծ կամաւոր բանակն է, որ «նահատակ ցեղի անմահներ»ու մնացորդացէն կերտեց նապատակայաց, պինդ ու հայրենանուէր «տորմիղ»՝ ամէնուրեք ծառայելու համար հայ ազգին, եւ ոչ միայն մարզական եւ սկառուտական ոլորտներէն ներս: Մ'կ խօսքով՝ հայ արիներու այս բանակը ո՛չ միայն ինքնակատարելագործման, մարմնով, մըտքով բարձրանալու առաքելութեան է նուրիուած, այլ՝ յատուկ ջանքի է լծուած մեր երիտասարդութիւնը մղելու նոր նշաճողեր յաղթահարելու՝ մարդկային ազնուութեան, գաղափարապաշտութեան եւ հայկական մաքուր դիմագիծի կերտման մարզերէն ներս: Այս հնոցէն կոփուող երիտասարդը կը պատրաստուի դիմագրաւելու համամարդկային ու համահայկական մարտահրաւերները միաժամանակ:

Պոլսոյ մէջ ծնունդ առած այս մեծ կազմակերպութիւնը անմիջապէս հասաւ 1918-ին նոր անկախացած հայրենիք, իսկ անկախութեան կորուստէն ետք ինքն ալ դարձաւ տարագիր եւ կեղրոնացաւ հայ Սփիրուքի մէջ իր կառոյցը ամէնուրեք արմատաւորելու գործին վրայ: Եւ ահա, ի մեծ ուրախութիւն բոլորիս, Հ.Մ.Ը.Մ. վերագտած է իր համահայկական առաքելութիւնը 1991-էն սկսեալ եւ այսօր կը հանդիսանայ հայրենիք-Սփիրուք իրարու կամրջող մեծ օղակ:

Ինչպէս միշտ, Հ.Մ.Ը.Մ.ի կեղրոնական վարչութեան համահայկական ու հայրենի ամէն նախաձեռնութիւն կը սկսի եռաբլուր այցելութեամբ՝ յարգանքի տուրք մատուցանելու համար մեր նահատակներուն: Խիստ գնահատելի այս քայլ արդէն անքակտելի սովորութեան է վերածուած:

Մեծ ժառանգութեան տէր Հ.Մ.Ը.Մ.ը այսօր ալ մեր հպարտութեան աղբիւրն է եւ ազգային անխորտակելի կամքի մարմնաւորումը: Վստահ ենք, որ ան շարունակաբար պիտի համախմբէ սերունդներ, գոտեպնդէ ազգային գաղափարախօսութեամբ, մղէ հայապահպանման, հայակերտման եւ հայդատի պայտի պայքարի մարդկային ու հայկական ամէնէն ազնիւ, պարկեշտ, նուրիբեալ ու նպատակասլաց իտէալներով:

**Սիրելինե՞ր,**

**Սրտի այս խօսքս կ'ուզեմ փակել Անդրանիկ Ծառուկեանի Հ.Մ.Ը.Մ.Ը.ին ալ այնքան պատշաճող փոթորկաշունչ պատգամով եւ Արարատին ուղղուած Ուխտով՝**

**«...Պիփի շարքերը մեր իրոխար փորորկին**

**Մեր պապերուն ի խմնիր սուրբ երազին...**

**Պիփի փշին մեզ իրարմէ անջապող**

**Ճակապազրին սեւ պատնէշները բոլոր:**

**«...Տես մեր շարքերը իանդաբորը ու արի**

**Տես մեր կարօպը խոյանքով Վահագնի**

**Տես մեր հոգին քու չիներուդ պէս մաքոր**

**Ու կանքը մեր, տես ամուսնուդ պէս ամուր...**

**Եւ հաւափա՛ կրանիդեայ ո՛վ Ասդուած,**

**Սրբազն լեն, հաւափա՛**

**Թէ կը հասմինք, մենք կը հասմինք կարարիդ...»:**

Վարձքը կատար Հ.Մ.Ը.Մ.ի կեղրոնական վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.Ը.-Հ.Ա.Ա.Կ.ի վարչութեան եւ բոլոր ներկայ քոյլերուն ու եղբայրներուն, որոնք հայրենի երկնակամարդին տակ համախումբ կատարելու են իրենց առաքելութիւնը:

**Լիակատար յաղողութիւն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:**

# ՀԱՅԱՔՈՒԱԾ՝ ՓԱՍՏԵԼՈՒ ՄԵՐ ԱՆԿՈՒՆ ԿԱՄՔԸ

## ԱՌԱՋ ՇԱՐԺԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋ ԱՌԱՋ ԱՌԱՋ

### ԽԱԿԻՆԻՑ ԱՒԵԼԻ ՈՒԺԵՂ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ

(Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՏԵՆԱՊԵՏ ՔՈՅՑ ՍԱՆՏՐԱ ՎԱՐԴԱՎԱՆԵԱՆԻ ԽՈՍՔԸ՝  
ՀԱՄԱ-Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱՆԱԿԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ  
ՀԱՅԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿ)

Պատուարժան հիւրեր, յարգելի ներկաներ,  
Սիրելի քոյրեր եւ եղայրներ,  
Ուրախ եմ Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անունից ողջունելու բոլորիդ  
համա-Հ.Մ.Բ.Մ.Ական 11-րդ մարզախաղերի բացման արարո-  
ղութեանը, քաղաքամայր Երեւանի «Ազատութեան» հրապարա-  
կից:

Վերջին անգամ երբ առիթը ունեցանք միասին լինելու այս  
հաւաքականութեամբ, աշխարհի 26 երկրներում տեղակայուած  
մեր սիրելի կազմակերպութեան շրջանների մարզիկների, մար-  
զիչների եւ պատուիրակութիւնների ներկայութեամբ, ընդամէ-  
նը հինգ տարի առաջ էր: Տարիների հաջուարկը երեւի թէ բնա-  
կանոն կեանքի դէպում այսքան երկար չէր թուայ ինչքան այ-  
սօր, եթէ մենք բոլորս ապրած շինէինք այն դժուարութիւններն  
ու արհաւիրքները, որ բաժին հասան աշխարհին ընդհանրապէս  
եւ հայ ժողովրդին մասնաւորապէս: Քորոնայի համաճարակը,  
երկրների տնտեսական եւ քաղաքական նզնաժամերը եւ անողոք  
պատերազմը իր հետ բերած բոլոր հետեւանքներով՝ թուում էր թէ  
անյաղթահարելի դժուարութիւններ են ստեղծել, նորից նման  
համա-Հ.Մ.Բ.Մ.Ական միջոցաւում ունենալու համար:

Սակայն, ինչպէս միշտ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր  
Միութիւնը, իր կամաւոր բանակով, յաղթահարեց բոլոր բնա-  
կան եւ արհեստական խոշլնդուսները, եւ մենք այսօր բոլորս  
այսեղ ենք՝ մեր մեծ ընտանիքի ներկայացուցիչներով հաւաք-  
ւած՝ փաստելու մեր աննկուն կամքը առաջ շարժուելու, իրար  
սատարելու, իրար յաղթանակներով տոգորուելու եւ նախկինից  
աւելի ուժեղ եւ կամային դուրս գալու պայքարի այն ամէնի հետ՝  
ինչը կը յայտնուի մեր առաջընթացի, զարդացման, տարածման,  
գաղափարների եւ տեսլականի իրականացման ճանապարհներ:

Եւ այո՛, այսօր արդէն իրականութիւն են համա-Հ.Մ.Բ.Մ.Ա-  
կան 11-րդ մարզախաղերը: Հ.Մ.Բ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը որպէս այս մեծ  
ընտանիքի անդամ, իր վրայ վերցներով հիւրընկալ շրջանի պա-  
տասխանատութիւնը, արդէն ամիսներ շարունակ լծուել է աշ-  
խատանքի, որպէսզի դուք, մեր շատ սիրելի քոյրեր եւ եղայրներ  
այս օրերի ընթացքում, լինելով հայրենի հողի վրայ, ամբողջու-  
թեամբ զգաք այդ բերկրանքն ու վայելէք ձեր՝ հայրենիքում գլո-  
ւուելու իրաքանչիւր պահը: Լիսայոյս եմ որ դա մեզ կը յաջողուի  
եւ դուք կը վերադառնաք ձեր շրջաններ, ձեզ հետ տանելով նոր  
լիքեր, նոր եռանդ եւ նոր աւիւն իրականացնելու այն մեծ առա-  
քելութիւնը, որի համար աշխատում է Հայ Մարմնակրթական  
Ընդհանուր Միութիւնը արդէն 104 տարի: Սա է մեր յաղթանակը,  
եւ անկախ այս օրերին տարբեր մարզական մրցումների արդիւնք-  
ներից՝ մենք բոլորս յաղթանակով ենք աւարտելու այս մարզա-  
խաղերը:

Բարի՛ երթ բոլորիս:





## ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ ՄԸ Հ.Մ.Լ.Մ.Ի 104-ԱՄԵԱՅ ԵՐԹԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ  
ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՄԱՆՈՒԵԼ ՄԱՐՄԻԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝  
ՀԱՄԱ-Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ,  
ԵՐԵՒԱՆԻ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿ)

**Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու կայացումը պատմական իրադարձութիւն մըն է, զոր Հ.Մ.Լ.Մ. կ'արձանագրէ իր 104-ամեայ երթին ընթացքին:**

Վերջին երկու տարիներուն քորոնայի համաճարակը հարւածեց ամբողջ աշխարհը: Հ.Մ.Լ.Մ. եւս ազդուեցաւ այս համաճարակէն եւ իր տարիներու աւանդութիւն դարձած քառամեայ համա-Հ.Մ.Լ.Մ.ական մարզախաղերը յետաձգեց, բայց միշտ եւ անպայման իրականացներու վճռակամութեամբ:

Բացման հանդիսաւոր այս պահուն բարի գալուստ կը մաղթեմ Հ.Մ.Լ.Մ.ի եւ թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ի պատուիրակութիւններուն՝ մարզիկներ, մարզիչներ, պատասխանատուներ եւ վարչականներ: Զեր գործակցութեան եւ զոհողութիւններուն չնորհիւ այսօր կարելի կ'ըլլայ իրագործել պատմական

այս չորրորդ մարզախաղերը մայր հայրենիքի մէջ: Կը մաղթեմ, որ ուրախ եւ դրական յիշատակներով կերադառնաք ձեր շրջանները:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերը կը յատկանշուին յատուկ խնամքի կարօտ երեխաներու համար ծրագրւած «Հրաշք» մարզախաղերով, որոնք առաջին անգամ ըլլալով կը կազմակերպուին եւ կը գործադրուին Հայաստանի մէջ: «Հրաշք» մարզախաղերու իրագործումով նոր փուլ մը ընթացք պիտի առնէ Հ.Մ.Լ.Մ.ի պատմութեան եւ ապագայ ծրագիրներուն մէջ: Շնորհակալութիւն Հայաստանի մէջ գրտնըւող բոլոր պատասխանատուներուն, որոնց բացառիկ գործակցութեան չնորհիւ կարելի պիտի ըլլայ իրականացնել «Հրաշք»ի ծրագիրը:

Շնորհակալութիւն Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ա.Կ.ի Վարչութեան եւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու յանձնախումբի

իմ գործակից քոյլերուս եւ եղբայրներուս, որոնց հետեւողական աշխատանքին եւ նույրումին չնորհիւ կը շարունակենք մեր ծրագիրներուն իրագործումը:

Դրական եւ ապահով յիշատակներով մարզախաղերը աւարտելու մաղթանքով, «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով առաջնորդուինք եւ եղբայրական ոգիով, պատմական յիշատակներով աւարտենք համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերը: Յաջողութիւն մեր բոլորին:









**ՍԵՓԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ  
ԱԶԳԱՒՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ  
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ  
ԱՐԺԵՒՈՐԵԼՈՒ ԴԱՍԸ**

**ՔԱՂՈՒԱԾ՝ ԵՌԱԲԼՈՒՐԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ  
ՊԱՆԹԷՈՆ ԱՅՑԵԼՈՒԹԵՆՔՆ**



ինգչարքի, 21 Յուլիս  
2022-ի առաւտօնեան ժա-  
մը 10-ին, Համա-Հ.Ա.-  
Հ.Մ.ական 11-րդ մարզա-  
խաղերու յայտագիրները  
ընթացք առին Եռաբլուրի նահատակաց  
պանթէոն այցելութեամբ:

**Հ.Մ.Հ.Հ.ի Կեդրոնական Վարչու-  
թեան անդամներու առաջնորդու-  
թեամբ եւ մարզախաղերու կազմակեր-  
պիչ յանձնախումբի ուղեկցութեամբ,  
մարզախաղերու մասնակիցները Եռա-  
բլուրի մէջ իրենց յարգանքի տուրքը  
մատուցեցին Հայրենիքի պաշտպանու-  
թեան նուիրական պատնէշին վրայ ին-**



Կած բոլոր հերոսներուն եւ յատկապէս ոգեկոչեցին յիշատակը Հ.Մ.Լ.Մ.ական 12 նահատակներու, որոնք անձնուիրաբար զոհուեցան Արցախիան առաջին երկրորդ պատերազմներու ընթացքին:

Եռաբլուրի մէջ, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով ատենապետ եղբ. Վաշէ Նաճարեան յարգանքի ծաղկեպսակ մը զետեղեց նահատակաց պանթէոնի կեդրոնական յուշաքարին առջեւ:

Հ.Մ.Լ.Մ.ի ընտանիքին անունով խօսք առաւ Կեդրոնական Վարչութեան ատենապիր եղբ. Վիգէն Աւագեան եւ յայտնեց, որ «Եռաբլուրը հայ մարդուն



համար սրբարան է: Հոս կը հանգչին մեր ազգին «լաւագոյն տղերքը»: Եռաբլուրի սրբազան հողին տակ հանդչող աճիւնները աւելի ուժ կու տան մարդոց՝ քան շատ մը ողջ մարդիկ: Հայ մարդը, շարունակեց ան,- այսօր Եռաբլուր կ'այցելէ իր ճակատէն սրբելու համար հայրենիք կորսնցուցածի ամօթը եւ իր խիղճէն հեռացնելու համար պարտութիւն կրածի զգացցումը»:

Եղբ. Աւագեան հաստատեց, որ «Մեր նահատակները մեր հպարտութիւնն են, որովհետեւ անոնց թափած արեամբ ներկուած է մեր ազգային գրօշին կարմրը: Մեր նահատակները մեր փառքն են ու պատիւը, մեր պարծանքն են ու մեր սիրանքը, գոյատեւելու մեր կամքը եւ զարգանալու մեր վճռականութիւնը՝ մեր հին ու նոր թշնամիներուն պարտադրելու համար մեր խաղաղութիւնը, ազգային մեր տեսլականներուն առաջնորդող քաղաքական մեր կամքը»:

Շարունակելով, եղբ. Աւագեան աւելցուց. «Մեր նահատակները ինկան, որպէսզի մենք ապրինք: Իսկ մենք պիտի ապրինք, որպէսզի իրենք յաւերժ ապրին մեր յիշողութիւններուն, ապրումներուն, մեր ժողովուրդի պատմութեան եւ ապագայի երազներուն մէջ, մինչեւ որ օրին մէկը իրարու համընկնին մեր պետութեան եւ հայրենիքին սահմանները: Ճիշդ է,- նշեց ան,- կարճ եղաւ մեր նահատակներուն երկրաւոր կեանքը, բայց անոնք կարողացան այդ կարճ կեանքը նոյնիսկ արժեւորել ազգասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ: Անոնք հայրենիքի հանդէպ իրենց պարտքը կատարեցին մեր բոլորին կողմէ, իսկ մեր պարտքը իրենց հանդէպ պիտի ըլլայ անշեղօրէն շարունակել իրենց ուղին, հայութեան եւ Հայաստանի ծառայութեան ուղին» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 40):

Խօսքէն ետք, 20 շրջաններու 645



մարզիկ-մարզիկուհիները խումբերու բաժնուած՝ այցելեցին Եռաբլուրի մէջ իրենց վերջին հանգիստը գտած անմահներու գերեզմանները, մինչ Հ.Մ.Լ.Մ.ի Կեղընական Վարչութեան եւ մարզախալերու կազմակերպիչ յանձնախումբի անդամները փառք ու պատիւ ընծայեցին Եռաբլուրի մէջ իրենց երկրորդ կեանքը ապրող Հ.Մ.Լ.Մ.ականներուն՝ յատուկ ծաղկեկողովներ զետեղելով անոնց շիրխմերուն:

Աւարտին, ազգային-հայրենասիրական երգերու խմբերգումէ ետք, այցելութիւնը պասկուեցաւ խմբային յիշատակելի նկարով մը:







# ՄԻՆՉԵՒ ՈՐ ՕՐԻՆ ՄԷԿԸ ԻՐԱՄՈՒ ՀԱՄԲՆԿՆԻՆ ՄԵՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՍԱՀՄԱՆԵՐԸ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
ԵՂԲ. ՎԻԳԻՆ ԱԻԱԳԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝  
ՀԱՄԱ-Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒԻ  
ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒԻՆ, ԵՌԱԲԼՈՒՐ)

**Ա**նպայման Հ.Մ.Լ.Մ.ա-  
կան ըլլալու կարիքը  
չկայ, գիտնալու հա-  
մար, թէ ինչո՞ւ եւ ի՞նչ-  
պէս չորս տարին ան-  
դամ մը կազմակերպուող համա-Հ.Մ.-  
Լ.Մ.ական մարզախաղերը կը սկսին  
Եռաբլուր այցելութեամբ։

Եռաբլուրը հայ մարդուն համար սըր-  
բարան է։ Հոս կը հանգչին մեր ազգին  
«լաւագոյն տղերքը»։ Եռաբլուրի սրբա-  
զան հողին տակ հանգչող աճիւնները  
աւելի ուժ կու տան մարդոց՝ քան շատ  
մը ողջ մարդիկ։

Հայ մարդը այսօր Եռաբլուր կ'այցե-  
լի իր ճակատէն սրբելու համար հայրե-  
նիք կորսնցուցածի ամօթը եւ իր խիղճէն  
հեռացնելու համար պարտութիւն կրա-  
ծի զգացումը։

Հայ մարդը, Հ.Մ.Լ.Մ.ականը առա-  
մել եւս, այստեղ՝ Եռաբլուրի մէջ կը խո-

նարհի իր նահատակներու յիշատակին  
դիմաց եւ կ'ընդունի, որ հայրենիքը ու-  
նի խսկական մէ՛կ տէր։ Հայրենիքը կը  
պատկանի իրենց կեանքը հայրենիքին  
տուողներուն, անմահներուն, եւ անոնց  
ազգային ու գաղափարական ժառան-  
գին տէր կանգնող սերունդներուն։

Եռաբլուր այցելող Հ.Մ.Լ.Մ.ականը  
կը հաստատէ, որ մեր նահատակները  
մեր հպարտութիւնն են, որովհետեւ  
անոնց թափած արեամբ ներկուած է  
մեր ազգային դրօշին կամքիրը։

Մեր նահատակները մեր փառքն են  
ու պատիւը, մեր պարծանքն են ու մեր  
սիրանքը, գոյատեւելու մեր կամքն են  
ու զարգանալու մեր վճռականութիւնը՝  
մեր հին ու նոր թշնամիններուն պար-  
տադրելու համար մե՛ր իսաղաղութիւնը,  
ազգային մեր տեսլականներուն առաջ-  
նորդող քաղաքական մե՛ր կամքը։

Մեր նահատակները անվախ, խի-







զախ, նույիրեալ, գլխագիր Տղամարդիկ էին, պայքարի եւ նույիրումի մէկական հոմանիշներ. անոնց հերոսապատումը պէտք է երգել ամէն օր ու ամէն տեղ, որովհետեւ անոնք ապրեցան հերոս նախորդներու արժանավայել կեանքով եւ հայրենիքի համար զոհեցին Աստուծոյ կողմէ իրենց տրուած մեծագոյն պարգևում՝ սեփական կեանքը:

Մեր նահատակները ինկան, որպէսզի մենք ապրինք: Իսկ մենք պիտի ապրինք, որպէսզի իրենք յաւերժ ապրին մեր յիշողութիւններուն, ապրումներուն, մեր ժողովուրդի պատմութեան եւ ապագայի երազներուն մէջ, մինչեւ որ օրին մէկը իրարու համընկնին մեր պետութեան եւ հայրենիքին սահմանները:

Ճիշտ է, կարճ եղաւ մեր նահատակներուն երկրաւոր կեանքը, բայց անոնք կարողացան այդ կարճ կեանքը նոյնիսկ արժեւորել ազգասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ: Անոնք հայրենիքի հանդէպ իրենց պարտքը կատարեցին մեր բոյորին կողմէ, իսկ մեր պարտքը իրենց հանդէպ պիտի ըլլայ անշեղօրէն շարունակել իրենց ուղին, հայութեան եւ Հայաստանի ծառայութեան ուղին:

**Սիրելի՝ քոյրեր եւ եղբայրներ,**  
Պուլկարական բանակին մէջ կայ հին ու գեղեցիկ սովորութիւն մը, ուր զինուորներու անուններու ստուգումին ժամանակ, նախ կը յիշուին իրենց երկրին ազատագրութեան ճամբուն ինկած նույիրական հերոսները: Երբ ստուգովը հերոսներուն անունները տայ, «ինկան», կը պատասխանէ բանակին աջ թեւի առաջին զինուորը: «Փա՛ռք», կը կրկնէ երկրորդ զինուորը եւ «Յաւերժ փառք», կ'աւելցնէ ամբողջ բանակը:

Հիմա, երբ Հ.Մ.Լ.Մ.ի մարզական բանակը այստեղ է, չենք կրնար մեր կարգին չիշել մահուամբ մահը յաղթահարած հայութեան բոլոր հերոսները, միասնաբար փա՛ռք եւ յաւերժ փառք տալու համար բոլորին:

Ցիշենք բոլորը ու յիշենք մանաւա՞նդ յաղթելու վճռակամութեամբ քաջաբար կուռած եւ հերոսաբար մարտի դաշտին վրայ ինկած, բայց չմեռա՛ծ, այլ՝ անմահութեամբ այստեղ իրենց երկրորդ կեանքը ապրող Հ.Մ.Լ.Մ.ական մեր նահատակները անուն առ անուն.-

Բախչեան Վարդան, Զաքարեան Վիգէն, Հաճեան Գէորգ, Ղազարեան Գրիգոր, Գալստեան Էրիկ, Իշխանեան Արտակ, Առուստամեան Արմէն, Աստարձեան Յակոբ, Սեբեմեան Մոսիկ, Բանոյեան Յարութ, Դերիկլեան Հայկ եւ Մարտիրոսեան Արտակ:


Փա՛ռք,  
Յաւերժ փառք:







**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ԱՐՀԱՒԻԻՌՔԸ ԵՒ  
ՎՆԿԱԽՈՒԹԵԱՆ  
ՄԽՐԱՆՔԸ  
ՄԱՐԶԻԿ-  
ՄԱՐԶԻԿՈՒՀԻՆԵՐ  
ԿԸ ՎԵՐԱՊՐԻՆ  
ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ  
ԵՒ ՄԱՐԴԱՐԱՊԱՏ  
ԱՅՑԵԼՈՒԹԵԱՄՐ**





**Հ.Մ.Լ.Մ.ի ամա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերու վեցերորդ օրը մրցումները դադար առին եւ օրը յատկացուեցաւ Ծիծեռնակաբերդի և Սարդարապատ այցելութեան:**

**Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու առաջնորդութեամբ, Երեքշաբթի, 26 Յուլիսի առաւտեան ժամը 10.30-ին, մարզախաղերու մասնակիցները այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Հայոց Յեղասպանութեան սրբադասուած նահատակներու յիշատակին:**

**Ծիծեռնակաբերդ հասնելով, Հ.Մ.-Լ.Մ.ի մարզիկ-մարզիկուհիները կարգապահ ու տպաւորիչ շարքերով քալեցին մինչեւ կեդրոնական յուշակոթող եւ ծաղկիկներ խոնարհեցին անմար կրակին շուրջ: Մուտքին, Հ.Մ.Լ.Մ.ի ընտանիքին անունով, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաշէ Նաճարեան գետեղեց յիշատակի ծաղկեասսակ մը:**

**Յուշակոթողին մէջ, Հ.Մ.Լ.Մ.ի ընտանիքին անունով խօսք առաւ Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Թալին Օրտողեան: Ան ըսաւ, որ «Այսօր Ապրիլ 24 չէ, այսօր Հայկական Յեղասպանութեան ոգեկոչումի աւանդական օրը չէ... բայց արդեօք 24 Ապրիլ պէտք է ըլլայ, որպէսզի յարգանքի մեր տուրքը տանք մեր նահատակներուն, որոնք հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան անքակտելի մէկ մասնիկը կազմեն»:**

**Շարունակելով, քոյր Օրտողեան հաստատեց, որ Ծիծեռնակաբերդը ազ-**

**գային պահանջատիրութեան խորհրդանիշն է: Ծիծեռնակաբերդը մնայուն հանգրուանն ու կայանն է իւրաքանչիւր հայու՝ Հայաստանի մէջ թէ անկէ դուրս, Սփիւրքի տարբեր ափերու վրայ: Ծիծեռնակաբերդը այն փարուն է, որ տուն կը հրաւիրէ բոլորս՝ ուր ալ գտնուինք, ու կարելի չէ երեւակայել, որ Հայաստան այցելող ուեւէ հայ կրնայ չայցելել Ծիծեռնակաբերդ՝ յարգելու յիշատակը 1.5 միլիոն նահատակներու, որոնք սուրբերու չարքին անցան:**

**Քոյր Օրտողեան նաեւ նկատել տըւաւ, որ «Յեղասպանութեան արհաւիրքէն ծնունդ առած Հայ Սարմնակրթական Ընդհանուր Միութեան համար յաւելեալ նշանակութիւն մըն ալ ունի այս վայրը՝ նկատի առած որ Հ.Մ.Լ.Մ.ի ստեղծման միտքը յղացող ու անոր ծնունդը կերտող Շաւարչ Քրիսեան դարձաւ Յեղասպանութեան առաջին գոհերէն: Ու զարմանալի չէ անշուշտ,**



**որ Հայաստանի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.Լ.Մ.ական ամէն ծրագիրի**





**մնայուն մէկ բաժինն է Ծիծեռնակաբերդ այցելութիւնը»:**

Ապա, քոյր Օրտողեան յիշեցուց, որ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերուն ջահը բոցավառեցաւ Ծիծեռնակաբերդի յուշակոթողին եւ, հետեւաբար, ան շեշտեց, որ «Այդ ջահը սակայն միայն խաղերը սկսելու ազդանշան չէ, անիկա իր մէջ կը պարփակէ ամբողջ ժողովուրդի մը պահանջատիրութեան բոցը, որ սերունդէ սերունդ կը փոխանցուի: Հոգի, մարմին ու միտք կոփող ու հայ առաքինի մարդ կերտող Հ.Մ.Լ.Մ.ը իր կամաւոր ամբողջ բանակը ի սպաս կը դնէ հայ դատին եւ հայ ժողովուրդի պահանջատիրական երթին: Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկն ու սկսուածը իրենց խոստումով ու երդումով ու իրենց ջամբըւած դաստիարակութեամբ կը միտին

դառնալ այն պահանջատէր հայը, որ չի մոռնար իր դատը եւ ամէն ինչ ի գործ կը դնէ ի խնդիր հայ ժողովուրդի արդար իրաւունքներու վերատիրացման: Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկը չորս տարին անգամ մը Հայաստան գալով եւ Ծիծեռնակաբերդ այցելելով կը վերանորոգէ ազգին ծառայելու ու անոր դատը հետապնդելու իր նույիրական ուժարը: Այսօր դարձեալ այդ ուժարը վերանորոգելու պահն է այս անմար ու յաւերժական կրակին դիմաց: ...11-րդ մարզախաղերու ջահը վառեցաւ այս վայրէն ու պիտի շարունակէ վառիլ ու բոցավորիլ չորս տարին անգամ մը, ու այնքան ատեն որ այդ ջահը կը շարունակէ իր անխափան երթը՝ փոխանցուելով սերունդէ սերունդ՝ պահանջատիրութեան երթն ալ պիտի շարունակուի, մինչեւ որ

հասնինք հայ ժողովուրդի ամբողջական իրաւունքներու վերատիրացման» (Խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 50):

Կերպունական Վարչութեան խօսքէն ետք, պահանջատիրական բարձր տրամադրութեամբ ներկաները երգեցին Հ.Մ.Լ.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգը: Ապա, խումբ առ խումբ անոնք այցելեցին Ցեղասպանութեան թանգարանը:

**«Մեկերեան» ԱԻԱՆԴԱԿԱՆ  
ԳՈՐԳԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԳՈՐԾԱՐԱՆ  
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ**

Ծիծեռնակաբերդէն ետք, մարզախաղերու մասնակիցներուն յաջորդկանգառը Սարդարապատն էր: Սակայն, նախքան Սարդարապատ մեղնումը, անոնք կէսօրին այցելեցին «Մեկերեան» աւանդական գորգի թանգարան-



գործարանը (Երեւան, Մատոյեան փողոց), ծանօթացան հայկական գորգի պատմական ու լաւագոյն ցուցանմոյշներուն, գորգագործութեան արհեստին եւ արուեստին: Ապա, անոնք ճաշեցին թանգարանին յատուկ ճաշարանին մէջ:

### ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ Մէջ

Կէսօրուան ճաշի դադարէն ետք, մարգախաղերու մասնակիցները այցելեցին Սարդարապատ եւ այս անգամ ծանօթացան 1918-ի պատմական սիրանքը անմահացուցած յուշարձան-համալիրին՝ իր նշանաւոր պատով, զանգակատունով եւ հոյակերտ արծիւներով: Մասնակիցները այցելեցին նաեւ Սարդարապատի հայոց պագագրութեան եւ



ազատագրական պայքարի պատմութեան ազգային թանգարանը, ուր մօտէն հաղորդուեցան հայոց հին թէ մօտ անցեալի պատմութեան հերոսական դըրւագներով: Թանգարանին պատասխանատուները աշխարհի 20 երկիրներէն ժամանած Հ.Մ.Լ.Մ.-ական նոր սերունդի ներկայացուցիչներուն լայն բացատրութիւններ տուին Սարդարապատի հերոսամարտի պայմաններուն, հերոսներուն եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան պատմութեան մասին:

Անկախութեան տենչով ապրող ու մեծցող մարզիկ-մարզիկուհիները Սարդարապատին հրաժեշտ տուին յիշատակի նկարով մը:







## ՈՒԽՏԵՆՔ ՄՆԱԼ ԿԱՍԱԽՈՐ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

(Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
ՔՈՅՑ ԹԱԼԻՆ ՕՐՏՈՂԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ  
11-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՂԵՐՈՒ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ, ԾԻՇԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ)

**Ա**յսօր Ապրիլ 24 չեմ, այսօր Հայկական Յեղասպանութեան ոգեկոչումի աւանդական օրը չեմ... բայց արդեօք 24 Ապրիլ պէտք է ըլլայ, որպէսզի յարգանքի մեր տուրքը տանք մեր նահատակներուն, որոնք հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան անքակտելի մէկ մասնիկը կը կազմեն:

Ծիծեռնակաբերդը ազգային պահանջատիրութեան խորհրդանիշն է: Ծիծեռնակաբերդը մնայուն հանգրուանն ու կայանն է իւրաքանչիւր հայու՝ Հայաստանի մէջ թէ անկէ դուրս, Սփիւրքի տարբեր ափերու վրայ: Ծիծեռնակաբերդը այն փարոսն է, որ տուն կը հրափրէ բոլորս՝ ուր ալ գտնուինք ու կարելի չէ երեւակայել, որ Հայաստան այցելող ուեւէ հայ կրնայ չայցելել Ծիծեռնակաբերդ՝ յարգելու յիշատակը 1.5 միլիոն նահատակներու, որոնք սուրբերու շարքին անցան:

Յեղասպանութեան արհաւիրքէն ծնունդ առած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան համար յաւելեալ նշանակութիւն մըն ալ ունի այս վայրը՝ նկատի առած որ Հ.Մ.Լ.Մ.Ի միտքը յղացող ու անոր ծնունդը կերտող Շաւարշ Քրիսեան դարձաւ Յեղաս-

պանութեան առաջին գոհերէն: Ու զարմանալի չէ անշուշտ, որ Հայաստանի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.-Լ.Մ.ական խրաքանչիւր ծրագիրի մնայուն մէկ բաժինն է Ծիծեռնակաբերդ այցելութիւնը:

Քանի մը օր առաջ, մայրաքաղաք Երեւանի մէջ պաշտօնական բացումը կատարուեցաւ համա-Հ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղերուն, որուն ջահը բոցավեցաւ Ծիծեռնակաբերդի անմար կրակէն՝ հասնելու համար «Ազատութեան» հրապարակ եւ ազգանշանը տալու խաղերուն: Այդ ջահը սակայն միայն խաղերը սկսելու ազդանշան չէ, անիկա իր մէջ կը պարփակէ ամբողջ ժողովուրդի մը պահանջատիրութեան բոցը, որ սերունդէ սերունդ կը փոխանցուի: Հոգի, մարմին ու միտք կոփող եւ հայ առաքինի մարդ կերտող Հ.Մ.Լ.Մ.Ը իր կամաւոր ամբողջ բանակը ի սպաս կը դնէ հայ դատին եւ հայ ժողովուրդի պահանջատիրութեան երթին: Հ.Մ.-Լ.Մ.ական մարզիկն ու սկառուտը իրենց խոստումով ու երդումով ու իրենց ջամբը բլած դաստիարակութեամբ կը միտին դառնալ այն պահանջատէր հայը, որ չի մոռնար իր դատը եւ ամէն ճիգ ի գործ կը դնէ՝ ի խնդիր հայ ժողովուրդի արդար իրաւունքներու վերատիրացման:



Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկը չորս տարին անգամ մը Հայաստան գալով եւ Ծիծեռնակաբերդ այցելով կը վերանորոգէ ազգին ծառայելու ու անոր դատը հետապնդելու իր նույիրական ուխտը:

Այսօր դարձեալ այդ ուխտը վերանորոգելու պահն է այս անմար ու յաւերժական կրակին դիմաց: Եւ վստահ եմ, որ Յեղասպանութեան մէն մի սրբադաւած նահատակի հոգին կը խայտայ ուրախութեամբ՝ ի տես հայ պատանիներու ու երիտասարդներու այս փաղանգին, որ երաշխիքն է պայծառ գալիքին ու ապագային:

11-րդ մարզախաղերու ջահը վառե-



ցաւ այս վայրէն ու պիտի շարունակէ վառիլ ու բոցավառիլ չորս տարին անգամ մը, ու այնքան ատեն որ այդ ջահը կը շարունակէ իր անխափան երթը՝ փոխանցուելով սերունդէ սերունդ՝ պահանջատիրութեան երթն ալ պիտի շարունակուի, մինչեւ որ հասնինք հայ ժողովուրդի ամբողջական իրաւունքներու վերատիրացման:

**Սիրելի՝ քոյլեր եւ եղբայրներ,**

Եկէ՞ք այսօր վերստին ուխտենք շարունակել մնալ նուիրեալ կամաւոր բանակը մեր ազգին ու հայրենիքին ու աշխատինք կերտելու անոր վարդահեղեղ արշալոյալ:





## ԼԻՉՊՈՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ 39-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ՝ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԵՐԵԿՈՅՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆ ԿԸ ՓՈԽԱՆՑՔ ՕՐՈՒԻԱՆ  
ՊԱՏԳԱՄԸ, ՄԻՆՉ Հ.Մ.Լ.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՈՍԿԻ ՄԵՏԱԼՈՎ ԿԸ ՊԱՏՈՒԻ ԱՐՑԱԽԵԱՆ  
ՎԵՐՁԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՄՆԱԿԻՑ 19 Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆՆԵՐ

**27** Յուլիս 2022-ի երե-  
կոյեան, համա-  
Հ.Մ.Լ.Մ.ական 11-  
րդ մարզախաղե-  
րու մամնակիցները  
ազգային-յեղափոխական երգերու ան-  
մուռանալի երեկոյով մը նշեցին Լիզպո-  
նի հերոսական գործողութեան 39-ամ-  
եակը:

Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Մ.Կ.Ի վարչութեան կազմակերպութեամբ, երեկոյին ներ-  
կայ գտնուեցաւ եւ օրուան պատգամը փոխանցեց հայ քաղաքական նախկին բանտարկեալ, ազգային հերոս Համբիկ Սամունեան: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Մ.Կ.Ի վարչութեան անդամ եղբ. Արթիւր Մկրտչեան:

Եղբ. Արթիւր Մկրտչեան իր խօսքին մէջ ոգեկոչեց Լիզպոնի նահատակնե-  
րուն յիշատակը եւ նշեց, որ Լիզպոնի անձնազոհները պահանջատէր հայու-  
թեան համար կը մնան յարատեւ պայ-  
քարի ուղեցոյց եւ գերագոյն զոհաբե-  
րութեան ուսանելի օրինակ: Հ.Մ.-  
Լ.Մ.ական յաջորդական սերունդներ մէծցած եւ դաստիարակուած են այն բոլոր արժէքներով, որոնց համար

իրենց սեփական կեանքը զոհեցին Արան, Սագոն, Վաչէն, Սիմոնը եւ Սեղ-  
րակը: Հայութիւնը երեւանէն մինչեւ աշխարհի չորս ծագերը կը խոնարհի Լիզպոնի հինգին յիշատակին դիմաց եւ ամէն տարի 27 Յուլիսին կը վերանորո-  
գէ անոնց ուղին շարունակելու իր յանձնառութիւնը:

Իր կարգին, ազգային հերոս Համ-  
բիկ Սամունեան գնահատեց Հ.Մ.Լ.Մ.Ի դերը հայ կեանքին մէջ: Ան լսաւ, որ Հ.Մ.Լ.Մ.ը մեծ հարստութիւն է: Ինք

հպարտ է, որ պատանեկութեան Հ.Մ.-  
Լ.Մ.ական եղած է: Հ.Մ.Լ.Մ.ը դպրոց  
մըն է, որմէ միշտ շատ բան ունին սոր-  
վելիք մեր պատանի-երիտասարդները:

Համբիկ Սամունեան մէկ վայրկեան յոտնկայս լուռութեան հրաւիրեց ներկա-  
ները եւ օրուան խորհուրդին մասին ար-  
տայայտուելով յայտնեց, որ մեր ժողո-  
վուրդը երկար դարերու իր պատմու-  
թեան ընթացքին ենթարկուած է շատե-  
րու տիրապետութեան, բայց չնորհիւ իր պայքարի ոգիին, ազգութիւնը պահած





է հաւատքով, լեզուով, աղօթքով, մշակոյթով եւ գէնքով։ Այսօր եւս մեր Հայրենիքը կը գտնուի դժուար պայմաններու մէջ,- չարունակեց Համբիկ Սասունեան,- որովհետեւ հայ իրականութեան մէջ կը գտնուին պատասխանատուներ, որոնց համար հայրենիքը, հայրենասիրութիւնը եւ ազգասիրութիւնը անխմաստ բաներ են, անոնք պատրաստ են զիջելու եւ պարտուելու, որովհետեւ չեն գիտեր, թէ ի՞նչ է հայրենասիրութիւնը,

ծառայութիւնը, քաջութիւնը եւ արժանապատութիւնը։

Իր պատգամին աւարտին, Համբիկ Սասունեան հաստատեց, որ հայրենիքը եւ ազգը կը պահուին խիզախներով, որոնց լաւագոյն ներկայացուցիչները կը գտնուին այս սրահին մէջ՝ տղաք, որոնք իրենց պայքարի ներշնչումը առած են Լիզապոնի տղոց գերագոյն նուիրաբերումի օրինակէն։ Անոնք ունին պայքարի բացառիկ կամք եւ գոհաբե-

րութեան մեծ պատրաստակամութիւն։ Լիզապոնը կը մնայ մեր նորագոյն պատմութեան ամէնէն պատուաբեր եւ հպարտաբեր մէկ դրուագը, որուն համար պէտք է չնորհակալ ըլլալ Լիզապոն ծնած ժողովուրդին եւ անոր գաղափարական ու Հ.Մ.Լ.Մ.ական զաւակներուն։ Փա՛ռք Լիզապոնի հերոսներուն եւ խոնարհում անոնց անմոռանալի յիշատակին, շեշտեց Համբիկ Սասունեան։

Երեկոյին ընթացքին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի վարչութեան առաջարկով, Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը մարզախաղերու ուկէ մետալով պատւեց 19 «խիզախներ»՝ Արցախեան վերջին պատերազմին մասնակից Հ.Մ.Լ.Մ.ականներ.- Յարութ Դերիկլեան, Էտկար Մկրտչեան, Դաւիթ Զարութիւնեան, Կարին Աւագեան, Սարգիս Գայմագամեան, Սարմէն Սաֆարեան, Հայկ Յակոբեան, Եղուարդ Էլբակեան, Անդրանիկ Աբոյեան, Արտաշէս Յակոբեան, Արտակ Ռէյվազեան, Դաւիթ Խորայէլեան, Անուշաւան Հայրապետեան, Էրիկ Նորյան, Գարիկ Միքայէլեան, Արման Գալստեան, Սահակ Յակոբեան, Արթիւր Միրզախանեան եւ Գագիկ Այվագեան։





Երեկոն խանդավառեցին «Սաս-նայ ծուեր» ազգագրական համոյ-թը եւ յեղափոխական երգերու եր-գիչ Սուրէն Աճէմեան, որոնք եր-կար ժամեր սրահը թնդացուցին ազգային-հայրենասիրական եւ յե-ղափոխական երգերով։ Ներկանե-րը ուսու-ուսու տուած՝ երգեցին, յուզ-ւեցան եւ գօտեպնդուցան Լիզպո-նի հինգ անձնագոհներու հերոսա-կան արարքով։







## ԿԱՏԱՐԵԱԼ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԽՏՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԻ ԼԱՒՎՈՅՆ ԱՐՏԱՎԱՅՏՍՈՒԹԻՒՆԸ՝ «ՀՐԱՉՔ» ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ



աշմանդամային (փարալիմֆիք) խաղերը նորութիւն են Հ.Մ.Լ.Մ.ին համար: Առաջին անգամ անոնք կիրարկուեցան միութեան 100-ամեակին, Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպած յատուկ մարզախաղերուն, որոնց օրին արուեցաւ «Հրաչք» անունը:

Մարզախաղերէն ետք, Շրջանային Վարչութիւնը յառաջացուց «Հրաչք» բաժանմունքը՝ մնայուն ուշադրութեան արժանացնելու համար յատուկ խնամքի կարօտ պատանիներու եւ երիտասարդներու շրջանակ մը, որ ակամայ հեռու մնացած է մարմնամարզէն եւ Հ.Մ.Լ.Մ.ի ճամբարով կրնայ աստիճանաբար համարկուիլ իր շրջապատին մէջ, քաջութեամբ, յարատենալութեամբ եւ ամէն տեսակի սահմանափակում շրջանցելու կարողութեամբ:

«Հրաչք»ի փորձառութիւնը, անցնող չորս տարիներուն, մասնագէտներու աշալութք հսկողութեամբ եւ ծնողներու հետեւողական աջակցութեամբ, Մ. Նահանգներու մէջ արձանագրեց յուսադրիչ յաջողութիւն եւ հասաւ մինչեւ... համաշ.Մ.Լ.Մ.ական 11-րդ մարզախաղեր, իբրեւ նորութիւն, փոր-





Ճարկուելու եւ այնուհետեւ չորս տարին անդամ մը իր մնայուն տեղը ունենալու համար:

Այս նպատակով, համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական 11-րդ մարզական շերու կազմակերպիչ մարմինը յառաջացուց «Հրաշք»ի խաղերով զբաղող յատուկ յանձնախումբ մը՝ գլխաւորութեամբ Հ.Մ.-Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի վարչութեան անդամ քոյր Վանիա Մովսէսեանի: Յանձնախումբին կողքին յառաջացաւ 50 կամաւորներէ բաղկացած խմբակ մը, որուն անդամները անսահման նույիրումով եւ մեծ հոգատարութեամբ ընկերութեամբ խաղերու մասնակիցներուն, օգնեցին անոնց խաղերու մասնակցութեան:

«Հրաշք»ի 184 պատամիներն ու երիտասարդները, իրենց ընկերացող օժանդակ կամաւորներով եւ յատուկ թիշըթիներով, ներկայ գտնուեցան մարզախաղերու բացման հանդիսութեան եւ զայն նախորդած պաշտօնական տողանցքի մէկ մասին:

Խաղերը տեղի ունեցան երկու օրուան տեսողութեամբ՝ 24 եւ 25 Յուլիս 2022-ին, Երեւանի թիւ 17 յատուկ դպրոցին մէջ, գործակցութեամբ դպրոցի տնօրէն Վիկա (Վիքմորիա) Եսայեանի: Առաջին օրը մըցումներուն մասնակցեցան Երեւանէն, Վանաձորէն եւ Ստեփանավանէն 93, իսկ երկրորդ օրը՝ Կիւմրիէն եւ Երեւանէն 90 պատամիներ եւ երիտասարդներ: Պատանի մըն ալ՝ Քրիստիան Քյոյճեան մասնակցեցաւ Արեւմբեան Մ. Նահանգներու շրջանէն:



**Խաղերը ընդգրկեցին վազք՝ առանձին եւ սայլակով, պարան քաշել, պոչչէ (Boccce), պասքեթպոլ եւ ֆութպոլ:**

Խաղերու աւարտին, առաջին եւ երկրորդ օրը, մասնակիցները հաւաքուեցան զիրենք հիւրընկալած դպրոցի սրահին մէջ, ուր տեղի ունեցաւ մրցանակակիրներու մետաղներու բաշխում՝ ձեռամբ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու, որոնք այս առիթով այցելեցին դպրոց եւ յիշատակելի քանի մը ժամ անցուցին «Հրաշք»ի պատանիներուն եւ երիտասարդներուն հետ:

Մետաղներու բաշխումէն առաջ, սակայն, անակնկալ մը վերապահուած էր մասնակիցներուն: Խաղերու կազմակերպիչ յանձնախումբը հրաւիրած էր տիկնիկային խումբ մը՝ զուարձացներու համար բոլորը: Խումբը հարթակային տիկնիկներով ներկայացուց «Ոսկէ ճուտիկ» հէքիաթը, խօսեցաւ, խաղաց, երգեց ու պարեց ներկաներուն հետ, ստեղծելով հաճելի եւ խանդապառ միջնորդաւ:

«Հրաշք»ի մասնակիցներուն այցելեցին նաեւ Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի մարզիկները եւ նուէրներ բաժնեցին անոնց: Մասնակիցները իրենց շրջաններն ու տուները մեկնելէ առաջ, իբրև յիշատակ, կազմակերպիչներէն ստացան մարզախաղերու մետաղներէն մէկական օրինակ: Ոչ ոք ձեռնունայն վերադարձաւ տուն: Բոլորը իրենց մետաղներուն հետ տուն տարին Հ.Մ.Լ.Մ.ին ծանօթացած ըլլալու ուրախութիւնը եւ ամբողջ օր մը մարզախաղերով սեփական դժուարութիւնները





յաղթահարած ըլլալու փորձառութիւնը: Հ.Մ.Լ.Մ.-ը ժաղիտցանեց անոնց դէմքերուն եւ փոխարէնը ստացաւ անհուն շնորհակալութիւն եւ գնահատանք:

Դաշտի վրայ, երկու օրուան մարզախաղերու արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը:-

### **ԱՆԱԶԻՆ ՕՐ - 24 ՅՈՒԼԻՒ**

#### **ՊԱՄՔԵԹՊՈԼ ՏՂԱՔ**

1. Գրիստիան Քըլբճեան
2. Ռուբէն Գրիգորեան
3. Արմէն Մարգարեան

#### **ՊԱՄՔԵԹՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Կարինէ Չուպանեան
2. Ատելլա Մարտոյեան
3. Գայլիանէ Կիւրզադեան

#### **ՊԱՐԱՆ ՔԱՇԵԼ**

Առաջին.- Աննա Դանիէլեան, Էլենա Ցարութիւնեան, Էղիկ Բախչեան, Կարէն Ազարեան, Էրիկ Պաղտասարեան, Նարեկ Քոչարեան, Գեղամ Հաննէեան

Երկրորդ.- Գուրգէն Սուքիասեան, Նարեկ Սարգիսեան, Արման Գէորգեան, Ռոման Նահապետեան, Հայկ Իգիթեան, Յովհաննէս Վարդանեան, Սիլվա Սուքիասեան, Մարիկթաղդասարեան, Սարգիս Ցարութիւնեան



#### **25 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ՏՂԱՔ**

1. Արեգ Լալայեան
2. Կարէն Ազարեան
3. Քրիստիան Քըլբճեան

#### **25 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Մարիկիթա Պաղտասարեան
2. Մոնիքա Պետրոսեան
3. Եւա Իգիթեան

#### **50 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ՏՂԱՔ**

1. Քրիստիան Քըլբճեան
2. Արէն Լալայեան
3. Մակունց Եռւրա

#### **50 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Մարիկիթա Պաղտասարեան
2. Տաթեւիկ Քոչարեան
3. Մոնիքա Պետրոսեան

#### **ՖՈՒԹՈՈԼ ՏՂԱՔ**

1. Կարէն Ազարեան
2. Գէորգ Աբրահամեան
3. Արէն Լալայեան





### ՖՈՒԹՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Գոհար Օհանջանեան
2. Մելիս Զաքարեան
3. Քնարիկ Գրիգորեան

### ԵՐԿՐՈՐԴ ՕՐ - 25 ՅՈՒԼԻՍ

#### ՊԱՍՔԵԹՊՈԼ ՏՀԱՔ

1. Գէորգի Խաչիկեան
2. Ռուբէն Վարդանեան
3. Արարատ Պետրոսեան

#### ՊԱՍՔԵԹՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Տիանա Մուրատեան
2. Ազատուհի Վարդանեան
3. Տիանա Դաւթեան
4. Անահիտ Նշանեան

#### ՖՈՒԹՊՈԼ - ՏՀԱՔ

1. Ռուբէն Վարդանեան
2. Արման Աղամեան

#### ՖՈՒԹՊՈԼ - ԱՂՋԻԿՆԵՐ

1. Սիւզի Սահակեան
2. Շողիկ Մուրատեան
3. Տիանա Մուրատեան





### **ՊԱՐԱՆ ՔԱՇԵԼ**

**Առաջին.- Շողիկ Մուրատեան, Անդրանիկ Ասլանեան,  
Տիանա Դալակաշվիլի, Թամարա Թարվիզեան, Լիլիթ Կարապետեան,  
Համլէթ Արզումանեան, Համլէթ Մկրտչեան, Արա Մարկոսեան**

**Երկրորդ.- Նարինէ Վարդանեան, Արման Պետրոսեան,  
Ասիրա Յարութիւնեան, Խաչատուր Աւագեան, Դաւիթ Ղազարեան,  
Գէորգի Խաչիկեան, Արմէն Ղուլեան, Վերա Ալեքսանդրեան**

### **25 ՄԵԹՐ ՍԱՅԼԱԿՈՎ ՎԱԶՔ - ՏՂԱՔ**

1. Դաւիթ Դարբինեան
2. Յովհաննէս Աբրահամեան

### **25 ՄԵԹՐ ՍԱՅԼԱԿՈՎ ՎԱԶՔ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Սվետլանա Յովհաննիսեան
2. Էլլա Գրիգորեան

### **50 ՄԵԹՐ ՍԱՅԼԱԿՈՎ ՎԱԶՔ - ՏՂԱՔ**

1. Ֆելիքս Մելիքսէթեան
2. Յակոբ Յակոբեան

### **50 ՄԵԹՐ ՍԱՅԼԱԿՈՎ ՎԱԶՔ - ԱՂՋԻԿՆԵՐ**

1. Սվետլանա Յովհաննիսեան
2. Վարդուհի Յովհաննիսեան





#### ՍԱՅԼԱԿՈՎ ՊԱՍՔԵԹՊՈԼ - ՏՂԱՔ

1. Մարտին Առաքելեան
2. Նարեկ Սարգսեան

#### ՍԱՅԼԱԿՈՎ ՊԱՍՔԵԹՊՈԼ - ԱՂՋԻԿՆԵՐ

1. Անդիխ Ռեւազեան
2. Սվետլանա Ցովհաննիսեան

#### 25 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ՏՂԱՔ

1. Արմէն Ղուլեան
2. Համլէթ Մկրտչեան

#### 25 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ԱՂՋԻԿՆԵՐ

1. Լիլիթ Կարապետեան
2. Տիանա Դալակաշվիլի

#### 50 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ՏՂԱՔ

1. Համլէթ Մկրտչեան
2. Արմէն Ղուլեան

#### 50 ՄԵԹՐ ՎԱԶՔ - ԱՂՋԻԿՆԵՐ

1. Շողիկ Մուղատեան
2. Լիլիթ Կարապետեան







## ԱՐԵՒՄՏԵԱՆ Ա. ՆԱՀԱԳՆԵՐ ՖՈՒԹՓՈԼԻ ԱԽՈՅԵԱՆ ԶՈՐՈՐՈԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱՎՈՎ

- ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍԱՍԻՐ ՖԱԲՀԱՏ ՀԱՄԱ-Հ.Մ.Ք.Մ.ՎԿԱՆ  
ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԼԱՒՎՈՅՆ ԿՈԼ-ՄՔՈՐԾԲ՝ 14 ԿՈԼՈՎ  
- Հ.Մ.Ք.Մ.-ՖՐԱՆՍԻ ԽԱԺԱԿ ՄԻԱՎԱԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ  
ՆՇԱՆԱԿԱԾ ԿՈԼԵՐՈՒՆ ԹԻՒՔ ԿԲ ՀԱՍՑՆԵ 18-Ի



**13** տարի ետք, Փութպոլի ախոյեանութեան բաժակը վերադարձաւ Արեւմտեան Մ. Նահանգներ, երբ Անարէու Սինանի եւ խմբակիցները յաջողեցան համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական մարզախաղերու առաջնութեան տիտղոսը չորրորդ անգամ ըլլալով ապահովել իրենց շրջանին: Նախապէս, Արեւմտեան Մ. Նահանգներու խումբերը առաջնութեան տիրացած էին երեք անգամ՝ 1985-ին, 1993-ին եւ 2009-ին:

Անշուշտ, դիւրին չեղաւ 2022-ի բաժակին ձեռք բերումը, որովհետեւ երեք այլ խումբեր եւս տիտղոսին տիրացման լուրջ թեկնածուներ էին. Աւստրալիա Ա. խմբակէն, Հ.Մ.-Լ.Մ.-Ֆրանս եւ Երուսաղէմ՝ Բ. խմբակէն:

Հարկ է նշել, որ Փութպոլի ակադեմիայի դաշտերուն վրայ կատարուած մրցումներուն մասնակցեցան 8 խումբեր, բաժնուած՝ երկու խմբակի մէջ: Զտումի մրցումներէն ետք, Ա. խմբակին պարագլուխի դիրքը դրաւեց Արեւմտեան Մ. Նահանգներու խումբը՝ 2 յաղթանակով եւ 1 հաւասարութեամբ: Խումբ նշանակեց 13 կոլ եւ ստացաւ միայն 1 կոլ: Իր ետին, 2 յաղթանակով լաւագոյն արդիւնքները արձանագրեց Աւստրալիան, նշանակելով 10 կոլ եւ ստանալով 1 կոլ:

Բ. խմբակին մէջ, լաւագոյնները հանդիսացան Հ.Մ.-Լ.Մ.-Ֆրանսը եւ Երուսաղէմը: Առաջինը իր բոլոր մրցումներն ալ աւարտեց յաղթանակով. նշանակեց 10 կոլ եւ ստացաւ 2 կոլ, մինչ Երուսաղէմ յաղթեց 2 մրցում, պարագաւեցաւ 1 մրցում, սակայն կարողացաւ 3 մրցումի ընթացքին նշանակել... 18 կոլ եւ ստանալ միայն 3 կոլ: Հետագային, քառորդ աւարտականին եւ կիսաւարտականին, Երուսաղէմի տղաքը նշանակեցին 9 կոլ եւս եւ ստացան 6 կոլ: Երուսաղէմի մարզիկներէն Սամիր Ֆարհատ մրցանիշ մը հաստատեց, երբ համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական մէկ մարզախաղի ընթացքին նշանակեց 14 կոլ՝ խորտակելով 2001-ին, համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական 6-րդ մարզախաղերուն, Սուլրիային Յակոբ Տէր Պօղոսեանի հաստատած մրցանիշը (12 կոլ՝ մէկ մարզախաղի ընթացքին): Մարզախաղերուն արձանագրուեցաւ նաեւ ուշագրաւ այլ երեւյթ մը, այն, որ Հ.Մ.-Լ.Մ.-Ֆրանսէն Խամակ Սինանեան յաջորդաբար երրորդ մարզախաղերը ըլլալով կոլ նշանակեց: Խամակ 2013-ին իր խումբին հետ նշանակած էր 6 կոլ, իսկ 2017-ին՝ 8 կոլ: Այս մարզախաղերուն ան նշանակեց 4 կոլ, ընդհանուր 18-ի հասցնելով համա-Հ.Մ.-Լ.Մ.-ական մարզախաղերուն ընթացքին իր նշանակած կոլերուն թիւը, ինչ որ դժուար թէ գերազանցող մը ըլլայ մօտիկ ապագային:







Վերադառնալով խմբակներուն եւ արդիւնքներուն, պատկերը ներկայացաւ հետեւեալ ձեւով.-

**Ա. ԽՄԲԱԿ**

1. Արեւմտեան Մ.Ն.
2. Աւստրալիա
3. Թիֆլիս
4. Հարաւային Ամերիկա

**Ա. Խմբակի մրցումներ**

Աւստրալիա - Թիֆլիս 6-0

Արեւմտեան Մ.Ն. - Հարաւային Ամերիկա 4-0

Աւստրալիա - Հարաւային Ամերիկա 3-0

Արեւմտեան Մ.Ն. - Թիֆլիս 8-0

Հարաւային Ամերիկա - Թիֆլիս 2-1

Արեւմտեան Մ.Ն. - Աւստրալիա 1-1

**Բ. ԽՄԲԱԿ**

1. Երուսաղէմ
2. Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս
3. Սուրիա
4. Լոնտոն

**Բ. Խմբակի մրցումներ**

Երուսաղէմ - Լոնտոն 5-1

Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս - Սուրիա 7-1

Երուսաղէմ - Սուրիա 12-0



**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս - Լոնտոն 1-0**

**Լոնտոն - Սուրիա 3-0**

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս - Երուսաղէմ 2-1**

Խմբակային մրցումներէն ետք, մեծագոյն անակնկալը արձանագրեց Աւստրալիոյ խումբը, որ յաջորդաբար պարտութեան մատնեց Լոնտոնի եւ Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի զօրաւոր խումբերը: Աւստրալիոյ տղաքը, մարզախաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, հասան աւարտական, ուր տեղի տուին տիտղոսին լուրջ թեկնածուներէն Արեւմտեան Մ. Նահանգներու խումբին դէմ եւ հանդիսացան երկրորդ:

Արեւմտեան Մ. Նահանգներ տիրացաւ ախոյեանութեան տիտղոսին եւ խմբային առաջնութեան բաժակին: Ախոյեան խումբէն Անտրէու Սինանի հանդիսացաւ լաւագոյն ֆութպոլիսատ:

Մնացեալ արդիւնքներու պարագային, պատկերը կարելի է ներկայացնել հետեւեալ ձեւով:-

**ՔԱՌՈՐԴ ԱԻԱՐՏԱԿԱՆՆԵՐ**

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս - Թիֆլիս 3-0**

**Արեւմտեան Մ.Ն. - Սուրիա 3-0**

**Երուսաղէմ - Հարաւային Ամերիկա 8-2**

**Աւստրալիա - Լոնտոն 3-2**

**ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆՆԵՐ**

**Արեւմտեան Մ.Ն. - Երուսաղէմ 4-1**

**Աւստրալիա - Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս 1-1 (Աւստրալիա յաղթական փենալթիներով՝ 6-5)**

**ԱԻԱՐՏԱԿԱՆ**

**Արեւմտեան Մ.Ն. - Աւստրալիա 3-1**

**3-4-րդ դիրքի մրցում**

**Երուսաղէմ - Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս 6-1**

**Հնդկանուր դասաւորում**

**1. Արեւմտեան Մ.Ն.**

**2. Աւստրալիա**

**3. Երուսաղէմ**












ՄԱՐԶԱԽԱՎԴԵՐՈՒՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՆԱԿԱՆԱՔ

ԱՐԵՒԵԼԵԱՆ Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ  
ՏՂՈՑ ԽՈՒՄԲԸ ԳԱՀԵՆԿԵՑ Կ'ԷՆԵ  
ՀԱՄԱՀ.Մ.Ը.ԱԿԱՆ ՊԱՍՔԵԹՊՈՒ Ի  
ՎԵՑ ԱՆԳԱՄ ԱԽՈՅՑԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ  
Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ





**ամառ-Հ.Մ.-Հ.Մ.-ական մարզախաղերը իրենց 41 տարուան պատմութեան պասքեթպոլի տղոց երրորդ ախոյեանը ունեցան 2022-ին: Արեւելեան Մ. Նահանգներու պասքեթպոլի տղոց խումբը յաջողեցաւ կրկնել 32 տարի առաջ Սուրբոյ տուց խումբին յաջողութիւնը եւ դառնալ տիտղոսակիր:**

Արդարեւ, պասքեթպոլը իր տեղը ունեցած է համար-Հ.Մ.-Հ.Մ.-ական եօթը մարզախաղերու մէջ, վեց անգամ տիտղոսակիր ունենալով Արեւմտեան Մ. Նահանգներու տղոց խումբերը: 1990-ին, Սուրբոյ տղոց խումբը կարողացած է անակնկալ մը ստեղծել եւ ախոյեանութեան բաժակը տանիի Հայէպ: Այլապէս, 1981-ին, 1997-ին, 2005-ին, 2009-ին, 2013-ին եւ 2017-ին, առաջնութեան բաժակին տիրացած են Արեւմտեան Մ. Նահանգներու տղոց խումբերը:

Այս մարզախաղերուն, տիտղոսին տիրացման մրցակցութիւնը սկիզբէն շատ սուր եղաւ չորս խումբերու միջնւ, որոնք հաւասարապէս արժանի էին առաջնութեան: Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներ, Աւստրալիա եւ Հ.Մ.Ա.Կ. ունին շատ լաւ կազմեր եւ մրցումներու ընթացքին ցուցաբերեցին տպաւորիչ խաղարկութիւն: Վերջին խօսքը սակայն պատկանեցաւ փորձառութեան, տոկունութեան եւ քիչ մըն ալ բախտին:

Հ.Մ.Ա.Կ. կրնար մինչեւ աւարտական համար, եթէ երբեք կիսաւարտականի իր մրցակիցը Արեւելեանի անպարտելի խումբը չըլլար: Արեւելեանի տղաքը մարզախաղերուն ներկայացած էին կատարեալ պատրաստութեամբ եւ իւրաքանչիւր կէտի համար մինչեւ վերջ պայքարելու բացառիկ կամքով: Անոնք անգերազանցելի մնացին թէ՛ իրենց խմբակի մրցումներուն եւ թէ քառորդ աւարտական, կիսաւարտական եւ աւարտական ճակատումներուն՝ արդիւնքներու լայն առաւելութեամբ պարտութեան մատնելով իրենց բոլոր մըրցակիցները: Աւարտականին, անոնք 32 կէտի տարբերութեամբ յաղթեցին Արեւմտեան Մ. Նահանգներու խումբին: Հ.Մ.Ա.Կ. հանդիսացաւ երրորդ, իսկ Հ.Մ.Ա.Կ.ի կազմէն գէորգ Յարութի հանդիսացաւ պասքեթպոլի տղոց լաւագոյն մարզիկ:

Պասքեթպոլի մրցումները տեղի ունեցան Կարէն Դեմիրճեանի անուան մարզադաշտին եւ Երեւանի Պետական Համալսարանի մարզադաշտին վրայ: Մրցումներուն մասնակցեցան եօթը շրջանէ ութ խումբեր՝ բաժնուած երկու խմբակի









**մէջ:** Արեւելեան Մ. Նահանգներու շրջանը մասնակցեցաւ երկու խոռվագիր:

Ստորեւ՝ խմբակներուն բաժանումները եւ մրցումներուն արդիւնքները -

#### **Ա. ԽՄԲԱԿ**

1. Արեւելմտեան Մ.Ն.
2. Լիբանան
3. Հ.Ա.Ա.Կ.
4. Արեւելեան Մ.Ն. (2)

#### **Ա. ԽՄԲԱԿի մրցումներ**

Լիբանան-Արեւելեան Մ.Ն. (2) 55-49

Արեւելմտեան Մ.Ն.- Հ.Ա.Ա.Կ. 73-17

Արեւելմտեան Մ.Ն. - Արեւելեան Մ.Ն. (2) 58-29

Լիբանան - Հ.Ա.Ա.Կ. 59-19

Արեւելեան (2) - Հ.Ա.Ա.Կ. 71-29

Արեւելմտեան Մ.Ն. - Լիբանան 69-32

#### **Բ. ԽՄԲԱԿ**

1. Արեւելեան Մ.Ն. (1)
2. Աւստրալիա
3. Սուրիա
4. Հ.Ա.Ա.Կ.

#### **Բ. ԽՄԲԱԿի մրցումներ**

Հ.Ա.Ա.Կ. - Աւստրալիա 53-34



**Արեւելեան Մ.Ն.(1) - Սուրիա 70-28  
 Հ.Մ.Ա.Կ. - Արեւելեան Մ.Ն. (1) 61-58  
 Աւստրալիա-Սուրիա 44-19  
 Արեւելեան Մ.Ն.(1) - Աւստրալիա 43-18  
 Հ.Մ.Ա.Կ. - Սուրիա 65-38**

**ՔԱՌՈՐԴ ԱԻԱՐՏԱԿԱՆՆԵՐ**  
 Արեւմտեան Մ.Ն. - Սուրիա 74-42  
 Աւստրալիա - Լիբանան 62-56  
 Արեւելեան Մ.Ն. (1) - Արեւելեան Մ.Ն. (2) 72-58  
 Հ.Մ.Ա.Կ. - Հ.Ա.Ա.Կ. 76-30

**ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆՆԵՐ**  
 Արեւմտեան Մ.Ն. - Աւստրալիա 64-49  
 Արեւելեան Մ.Ն. (1) - Հ.Մ.Ա.Կ. 65-54

**ԱԻԱՐՏԱԿԱՆ**  
 Արեւելեան Մ.Ն. (1) - Արեւմտեան Մ.Ն. 81-49

**3-4-րդ դիրքի մրցում**  
 Հ.Մ.Ա.Կ. - Աւստրալիա 44-25  
**Հնդկանուր դասաւորում**  
 1. Արեւելեան Մ.Ն. (1)  
 2. Արեւմտեան Մ.Ն.  
 3. Հ.Մ.Ա.Կ.











**Հ.Մ.Ը. ԱՐԱՏՐԱՎԻԿԱ  
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ  
ԲԼԱՍՏՈՎ ԿԸ ՏԻՐԱՆԱՅՅ  
ՊԱՍՔԵԹՊՈԼԻ  
ԱՂՋԿԱՆՑ  
ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ  
ՏԻՏՎԱՆԻՒՆ**





**Ա**սաքեթպոլի աղջկանց մրցումները ունեցան համա-Հ.Մ.Լ.Մ.-ական իրենց նոր ախոյեանը։ Աւստրալիոյ աղջկանց խումբը, մարզախաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլարով, տիրացաւ առաջնութեան տիտղոսին եւ շրջանին ապահովեց նաեւ պասքեթպոլի խմբային արդիւնքներու (տղաք եւ աղջիկներ) առաջնութեան բաժակը։

Վերջին քառորդ դարուն, համա-Հ.Մ.Լ.Մ.-ական մարզախաղերու պասքեթպոլի աղջկանց առաջնութեան տիտղոսին տիրացած էին Արեւմտեան Մ. Նահանգներու խումբերը (3 անգամ), Թէհրանի Հ.Մ.Ա.Կ.ը (անգամ մը) եւ Հ.Ա.Մ.Կ.ը (անգամ մը)։ Աւստրալիա երբեք չէր յաջողած հասնիլ աւարտական։ Այս մարզախաղերուն, Աւստրալիոյ աղջիկները կրկնակի իրագործում մը կատարեցին, երբ միաժամանակ հասան թէ՛ պասքեթպոլի 3x3 մրցումներու եւ թէ սովորական պասքեթպոլի աւարտականներուն։ Ու եթէ անոնք 3x3 մրցումներուն երկու կէտով տեղի տուին Լիբանանի աղջկանց խումբին դիմաց եւ հանդիսացան երկրորդ (7-9), այստեղ անոնք վրէժ լուծեցին նոյն խումբէն, որուն պարտութեան մատնեցին... երկու կէտով (55-53)։ Ի դէպ, Լիբանանի խումբէն Փաթիլ Ասատուրեան հանդիսացաւ մարզախաղերու պասքեթպոլի լաւագոյն մարզիկուհին։

Պասքեթպոլի մրցումներուն մասնակցեցան հինգ խում-







բեր, երկուքը՝ Աւստրալիային: Կազմուեցաւ մէկ խմբակ, բաղկացած հետեւեալներէն.-

1. Արեւմտեան Մ.Ն.

2. Աւստրալիա (1)

3. Աւստրալիա (2)

4. Լիբանան

5. Սուրիա

Արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.-

Աւստրալիա (1) - Աւստրալիա (2) 25-18

Լիբանան - Սուրիա 44-43

Արեւմտեան Մ.Ն. - Սուրիա 50-31

Լիբանան - Աւստրալիա 44-30

Լիբանան - Արեւմտեան Մ.Ն. 47-25

Աւստրալիա (2) - Սուրիա 45-28

Աւստրալիա (1) - Սուրիա 52-35

Աւստրալիա (2) - Արեւմտեան Մ.Ն. 32-25

Աւստրալիա (1) - Արեւմտեան Մ.Ն. 34-19

Լիբանան - Աւստրալիա (2)

#### ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆՆԵՐ

Լիբանան - Արեւմտեան Մ.Ն. 50-35

Աւստրալիա (1) - Աւստրալիա (2) 35-32

#### ԱԻԱՐՏԱԿԱՆ

Աւստրալիա (1) - Լիբանան 55-53

#### 3-4-րդ դիրքի մրցում

Արեւմտեան Մ.Ն. - Աւստրալիա (2) 49-32

#### ՀՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱւՈՐՈՒՄ

1. Աւստրալիա (1)

2. Լիբանան

3. Արեւմտեան Մ.Ն.





# ՊԱՍՔԵԹՊՈԼԻ 3x3 ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԼԻԲԱՆԱԿԻ ՏՂՈՑ ՈՒ ԱՂՋԿԱՆՑ ԳԵՐԱԶԱՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ



**ամա-Հ.Մ.-Լ.Մ.-ական 11-րդ մարզախաղերու նորութիւններէն եղան պասքեթպոլի տղոց ու աղջկանց 3x3 մրցումները, որոնց մասնակցեցան 12 խումբեր՝ Խումբերէն հինգը եկան երկու շրջանէ՝ Հայաստանէն (աղջկանց 3 խումբեր) եւ Լիբանանէն (տղոց երկու խումբեր):**

Ի տարբերութիւն պասքեթպոլի մըրցումներուն, ուր տիրապետութիւնը Հ.Մ.-Լ.Մ.-ի Արեւելեան Մ. Նահանգներու (տղաք) եւ Աւստրալիոյ (աղջկներ) շրջաններուն էր, պասքեթպոլի 3x3 մըրցումներուն իրենց բացարձակ գերակայութիւնը հաստատեցին Լիբանանի Խումբերը, որոնք արժանացան տղոց,

աղջկանց եւ խմբային առաջնութեան տիրոսներուն։ Լիբանանէն Վարագ Քէօշէնան հանդիսացաւ տղոց լաւագոյն մարզիկ, իսկ Աւստրալիայէն Արիանա Ամիրիսան՝ աղջկանց լաւագոյն մարզիկունց:

Տղոց մրցումներու պարագային, մասնակիցները բաժնուեցան երկու խըմբեակի։ Առաջին խմբակին մաս կազմեցին Հ.Ա.Մ.Կ.ի երկու խումբերը (Հ.Ա.Մ.Կ. 1 եւ Հ.Ա.Մ.Կ. 2), Լիբանանը եւ Լոնտոնը: Երկրորդ խմբակը բաղկացաւ հետեւեալներէն.՝ Հ.Ա.Մ.Կ. (3), Գանատա, Սուրիա եւ Հ.Ա.Լ.Մ.-Ֆրանս:

Մըրցումներու արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը.՝





### **Ա. ԽՄԲԱԿ**

**Հ.Ա.Ս.Կ.** (1) - **Հ.Ա.Ս.Կ.** (2) 2-0

**Լիբանան** - **Լոնտոն** 15-7

**Լիբանան** - **Հ.Ա.Ս.Կ.** (2) 16-6

**Լոնտոն** - **Հ.Ա.Ս.Կ.** (1) 10-6

**Լիբանան** - **Հ.Ա.Ս.Կ.** (1) 2-0

**Լոնտոն** - **Հ.Ա.Ս.Կ.** (2) 12-5

### **Բ. ԽՄԲԱԿ**

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս** - **Հ.Ա.Ս.Կ.** (3) 13-3

**Սուրիա** - **Գանատա** 12-6

**Սուրիա** - **Հ.Ա.Ս.Կ.** (3) 15-3

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս** - **Գանատա** 9-8

### **Աղջկանց մրցումներուն**

**Սուրիա** - **Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս** 13-11

**Գանատա** - **Հ.Ա.Ս.Կ.** (3) 2-0

**Քառորդ աւարտականներ**

**Լոնտոն** - **Գանատա** 9-7

**Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս** - **Հ.Ա.Ս.Կ.** (1) 20-7

**Սուրիա** - **Հ.Ա.Ս.Կ.** (2) 20-5

**Լիբանան** - **Հ.Ա.Ս.Կ.** (3) 2-0

**Կիսաւարտականներ**

